Ազգ

AZG
armenian newspaper

Հոկտեմբեր 27
1992
Երեքշաբթի

օրաթերթ
Բ տարի, թիւ 117 (209)
գինը՝ 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPIRI SU

Անսպասելի արդյունք Լիտվական ընտրություններում

Սայուդիս՝ 21 տոկոս, նախկին կոմունիստներ՝ 40 տոկոս

Կիրակի օրը Լիտվայում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունները անսպասելի եւ շրջադարձային արդյունք տվեցին. նախկին կոմունիստական տարբեր հոսանքների ներկայացուցիչները հավաքվեցին ձայների 40 տոկոսը, մինչ Սայուդիսը բավարարվեց ընդամենը 20 տոկոսով: Այս վերջինն ամբաստանեց Մոսկվայի ընտրություններում տարբեր միջոցներով Լիտվայի ազգայնականների դեմ դավելու հանցանքով:

Երկու շաբաթ հետո կկայանա լրացուցիչ քվեարկություններ բազմաթիվ տեղերի համար: ■

Ելցին-Տեր-Պետրոսյան հանդիպում փակ դռների ետեւում

Հոկտեմբերի 24-ին Մոսկվայում կայացած հայ-ռուսական բանակցություններն անցան փակ դռների ետեւում, մի թղթակցի հայտնեց Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանը: Անդրադառնալով մոսկովյան հանդիպմանը, նա նշեց, որ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հանդիպել է Ռուսաստանի պետքարտուղար Բուրբուլիսին, առանձնազրույցներ է ունեցել նախագահ Ելցինի եւ արտգործնախարար Կոզիրեւի հետ: Նախագահը եւ իր խորհրդական Վազգեն Սարգսյանը հանդիպել են Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Գրաչովի հետ:

Նույն օրը Հայաստանի փոխնախագահ Գագիկ Հարությունյանին, փոխվարչապետ Հրանտ Բագրատյանին, պետնախարարներ Գագիկ Շահբազյանին ու Վիգեն Չիտչյանին ընդունել է Ռուսաստանի վարչապետ Թիմուր Գայդարը:

Բանակցությունների ընթացքում քննարկվել է երկկողմ հարաբերություններին, Հյուսիսային Օսիայում պայթած գազամուղի վերակազմման, հացի մատակարարմանը նվիրված հարցեր:

Նախագահի մամուլի քարտուղարի գնահատմամբ մոսկովյան հանդիպումը կրում էր աշխատանքային բնույթ եւ իրեն լիովին արդարացրեց: ■

Մարտակերտի շրջանում հակառակորդի գրոհը ետ է մղվել

Ադրբեջանական օդուժը շարունակում է ասպատակությունները Լեռնային Ղարաբաղի երկնքում

Ինչպես հաղորդում է Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը, նախորդ գիշեր Ղաջարում տեղակայված ադրբեջանական հենակետերից հրթիռակոծվել եւ հրետակոծվել են Մարտունի քաղաքի արվարձանները: Կան զգալի ավերածություններ:

Նույն գործակալությունը հաղորդում է նաեւ, որ հոկտեմբերի լույս 26-ի գիշերը ադրբեջանական կազմավորումները Մարտակերտի շրջանի բռնազավթված Չլդրան գյուղից փորձել են շարժվել դեպի հարավ: ԼՂՀ ինքնաաշխատանության ուժերին հաջողվել է կասեցնել գրոհը՝ ադրբեջանական կազմավորումներին պատճառելով 15 սպանված: Թշնամին ստիպված է եղել նահանջել:

Երեկ առավոտյան ադրբեջանական կազմավորումներն ստիպված են եղել նահանջել նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիս-արեւելյան մասույցներից: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան:

Ստեփանակերտ, 26 հոկտեմբեր. Կարճատեւ դադարից հետո ադրբեջանական ռազմական ինքնաթիռները վերսկսեցին Լեռնային Ղարաբաղի բնակավայրերի ռմբակոծությունը: Հոկտեմբերի 25-ին ադրբեջանական ինքնաթիռները գնդիկավոր ռումբեր են նետել Ստեփանակերտի վրա: Սպանվել է 1, վիրավորվել 2 բնակիչ: Նախօրյակին, հոկտեմբերի 24-ին ադրբեջանական օդուժը նորից երեւաց Մարտունու շրջանում: Կասետային ու գնդիկավոր ռումբեր են նետվել Ավդուռ, Մյուռիշեն, Մաճկալաշեն, Կարմիր Շուկա, Հադրութի շրջանի Տող եւ Էդիլլու բնակավայրերի վրա: Տուժածների մասին տեղեկություններ դեռեւս չեն ստացվել: Հոկտեմբերի 26-ին ադրբեջանական օդուժը Ստեփանակերտի արվարձանների վրա է նետել կասետային ռումբեր: Տուժածների թիվը ճշտվում է:

Դիմակայելով ադրբեջանական բանակի ճնշմանը, Լաչինի միջանցքի շրջանում ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը հաջող մարտական գործողություններ են վարում միջանցքի հյուսիս-արեւելքում: Մանրամասնությունները ճշտվում են:

Մարտակերտի շրջանում շարունակվում են դիրքային մարտերը:

Մեր սեփական թղթակից
ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Իսրայելական հարձակումներ Լիբանանի վրա

Ի պատասխան նախորդ օրը «անվտանգության գոտուց» ներս գինվորական մի շարասյան վրա կատարված հարձակման, որի հետեւանքով սպանվել էին 5 եւ վիրավորվել 5 հրեա զինվորներ, երեկ իսրայելյան բանակային մի մեծ զորախումբ, ուղղաթիռների եւ հրետանու օգնությամբ լայնածավալ հարձակման անցավ Լիբանանի հարավային Նաբաթիե քաղաքի եւ Բեքաայի հովտի Հզբոլլահի գինվորական հենակետերի դեմ: Հրետանուց արձակվեց ավելի քան 200 համազարկ վերոհիշյալ եւ այլ բնակավայրերի դեմ, կործանելով բազմաթիվ բնակելի տներ եւ ռազմական կենտրոններ: Գիշերը Իսրայելի կառավարությունը Սիրիայից պահանջեց մեկընդմիշտ լուծել Բեքաայի հովտում հաստատված ոչ պետական ռազմախարիսխների հարցը, մինչ արտգործնախարար Շիմոն Պերեսը Մադրիդից, որտեղ գտնվում է պաշտոնական այցով, վստահեցրեց, թե հրեական պետությունն *«անպայմանորեն չի թողնելու նախահարձակներին»*: Նախորդ օրը իսրայելյան բանակի կրած կորուստը մեծագույնն էր 1982 թ. ներխուժումից ի վեր, երբ Թել Ավիվի զորքերը, գրավելով Լիբանանի հարավային շրջանների մեծ մասը, հասել էին մայրաքաղաք Բեյրութ: ■

Իջեւանի շրջանում սաստիկ հրետակոծությունների հետեւանքով ավերածություններ

Վայքի ուղղությամբ մեծ կուտակումներ

Ինչպես հայտնում են Հայաստանի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնից, հոկտեմբերի 25-ի երեկոյան եւ լույս 26-ի գիշերը Ադրբեջանի տարածից գնդակոծվել եւ հրետակոծվել են Իջեւանի, Եղեգնաձորի եւ Կաղանի շրջանների մի շարք սահմանամերձ բնակավայրեր: Ընդ որում, Իջեւանի շրջանի գյուղերը հրետակոծվել են տանկերից, հրանոթներից եւ «Գրադ» կայանքներից: «Նոյյան տաղան» գործակալությունը տեղեկացնում է, թե հրետակոծվել են Բերքաբեր, Կիրանց, Սեւքար, Վազաշեն, Սարիգյուղ եւ Այգեհովիտ գյուղերը: Բերքաբեր եւ Սեւքար գյուղերում կան ավերածություններ: Մանրամասները ճշտվում են:

Ինչպես երեկ երեկոյան տեղեկացանք Իջեւանի շրջանի գործկոմից, ժամը 18-ի դրությամբ իրավիճակը համեմատաբար հանգիստ էր: Բարեբախտաբար, գիշերային հրետակոծությունների հետեւանքով զոհեր եւ վիրավորներ չեն եղել:

«Նոյյան տաղան»ը, վկայակոչելով Վայքի շրջանի պարետատից ստացված տեղեկությունները, հայտնում է, թե Նախիջեւանի տարածքից գնդացիրներից եւ ավտոմատներից գնդակոծվել են շրջանի սահմանամերձ Խնձորուտ եւ Բարձուք գյուղերը: Այդ ուղղությամբ նկատվում են բշնամու ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի մեծ կուտակումներ:

Երեկ եւ նախորդ օրը փոքր տրամաչափի գինատեսակներից գնդակոծվել են նաեւ Տաուշի շրջանի սահմանամերձ բնակավայրերը: Հայկական կողմից տուժածներ չկան:

Մինչդեռ, ինչպես հայտնում են Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից, երեկ եւ նախորդ օրը Հայաստանի տարածքից զենքի տարբեր տեսակներից, այդ թվում նաեւ «Գրադ» կայանքներից հրետակոծվել են Ադրբեջանի Ղազախի շրջանի սահմանամերձ բնակավայրերը: Երկու հոգի զոհվել են, հինգը՝ վիրավորվել: ■

Կազիմիրով-Մանվել Սարգսյան հանդիպում Երեւանում

Հոկտեմբերի 26-ին Երեւանի ԼՂՀ ներկայացուցչությունում կայացավ Ռուսաստանի Դաշնության հատուկ հանձնարարություններով դեսպան Վլադիմիր Կազիմիրովի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչ Մանվել Սարգսյանի հանդիպումը: Կողմերը քննարկեցին շրջանի իրադրությունը, ինչպես նաեւ Ղարաբաղի հակամարտության կարգավորման Ռուսաստանի հերթական նախագիծը:

Մասնակիցները համաձայնեցին, թե ԼՂՀ-ն լիարժեք հակամարտող կողմ է, եւ հույս հայտնեցին, որ Ադրբեջանի ղեկավարությունը հաշվի կառնի այդ փաստը իր հետագա գործողություններում եւ իրավիճակի կարգավորմանն ուղղված քաղաքական քայլերում:

Իր կողմից Մանվել Սարգսյանը երախտագիտություն հայտնեց Ռուսաստանի կառավարությանը՝ խաղաղ կարգավորման ուղիներ փնտրելու համար, շեշտելով, որ ներկայացված նոր նախագծի մասին իր վերջնական եզրակացությունը Ղարաբաղը կհայտարարի միայն փաստաթղթի մանրամասն ուսումնասիրությունից հետո: Ինչպես «Սնարք»ի թղթակցին հայտնեցին ԼՂՀ ներկայացուցչությունում, Վլադիմիր Կազիմիրովը կայցելի նաեւ Բաքու, Անկարա եւ Թեհրան: ■

Քլինթոնը հանգիստ առավելությամբ Պերոն կրճատում է տարբերությունը

Շաբաթավերջի հասարակական կարծիքի հարցման արդյունքներում Ռոս Պերոն դարձյալ ափոթություն է մտցրել Մ. Նահանգների նախագահական ընտրապայքարում, առաջ անցնելով նախագահ Բուշից եւ զգալիորեն կրճատելով իր եւ դեմոկրատ թեկնածուի միջեւ տարբերությունը, սակայն ոչ այնքան, որ անհանգստացնի Քլինթոնին: Անկախ թեկնածուն հայտարարեց, թե ամռանը նախագահական ընտրապայքարից իր դուրս գալու պատճառը դեմոկրատների եւ հանրապետականների կողմից իր նկատմամբ եղած ոտնձգություններն էին: Առաջինները փորձել էին խանգարել նրա դստեր հարսանիքը, իսկ հանրապետականներն սպառնացել էին ունկնդրության տակ առնել նրա գրասենյակը: Տեխասցի միլիարդատերը կարող է ընտրապայքարի այս վերջին շաբաթը ծախսել 25 միլիոն դոլլար աննախադեպ քվեարկության համար: ■

Բեյքերն Իրանի օգնությունն է խնդրել

Ըստ երեւույթին, ամերիկյան պետական շրջանակներում ձեւավորվում է մի նոր գայթակղության պատմություն: Ուրբաթ օրը Սենատի համապատասխան բաժնից հրապարակված մի փաստաթղթից պարզվում է, որ 1989 թ. պետքարտուղար Ջեյմս Բեյքերն անձամբ խնդրել է Իրանի միջնորդությունը Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը տարհամոզելու, որպեսզի վերջինս չարգելակի պաղեստինցիների մասնակցությունը Իսրայելի հետ խաղաղության բանակցություններին, որոնք վարում էր ինքը: Ներկայիս Սպիտակ տան անձնակազմի պետը դա փոխարեն միջնորդել է, որպեսզի 1 միլիարդ դոլլարի գյուղատնտեսական վարկ տվի Իրանին, հակառակ առկա փաստերին, որ Բաղդադն այն օգտագործելու է այլ նպատակներով: Նախագահական ընտրապայքարի ներկա օրերին Բուշի հակառակորդները կարող են այս փաստը լավագույնս օգտագործել: ■

ՀԲԸՄ-ն նոր մարտահրավերների ընդառաջ

Արեւմ. 26 Հոկտեմբեր. Յունաստանի մայրաքաղաքի «Լիդրա Մեհիոր» պանդոկին մէջ 23 եւ 24 Հոկտեմբերին յաջորդաբար գումարուեցան ՀԲԸ Միութեան ատենադպիրներու համաժողովն ու Ընդհանուր ժողովը:

Ատենադպիրներու համաժողովը հիմնականին մէջ քննարկեց ափիւռքի հայութեան նիւթական թէ մասնագիտական միջոցները, ինչպէս նաեւ այլ կարգի հնարաւորութիւններն աւելի արդիւնաւոր կերպով Հայաստանի սփեսական ու հասարակական զարգացման ծառայեցնելու կարեւոր հարցերը, մինչ Ընդհանուր ժողովը, ըստ սովորականին, լսեց Միութեան նախագահին եւ գանձապահին տեղեկագիրները 1990-91 տարեշրջաններու համար, վաւերացուց զանոնք եւ ընտրեցաւ ամբողջացուց Կեդրոնական վարչական ժողովի կազմը, որուն նոր անդամները դարձան Փարիզէն դրն. Լեւոն Քեղաղճեանը եւ Կալիֆորնիայէն դրն. Սինան Սինանեանն ու դասատու Տիգրան Թեւրիզեան կրտսերը:

Զոյգ ժողովներն իրենց աշխատանքները ամբողջացուցին համերաշխութեան ու իրարհասկացողութեան մթնոլորտի մէջ, հաստատելով թէ ՀԲԸՄ-ն իր համազգաղութային տարողութեամբ ըլլալով հզօրագոյն հայկական կազմակերպութիւնը, իրեն կը վիճակուի առաջնորդող դեր մը գաղութահայ կեանքին մէջ:

Ընդհանուր ժողովին եսք, Շաբաթ 24 Հոկտեմբերի երեկոյեան, նոյն պանդոկին մէջ տեղի ունեցաւ եզրափակիչ հաւաքը, որուն ընթացքին Վիեննա բնակող բարեւար Կարոլիս Փափազեանն անձամբ Սուրիոյ շրջանակային յանձնաժողովի ատենապետ Սուրէն Շորվոլեանին յանձնեց իր անունը կրող մրցանակը, փոխանցելու համար Հալէպէն գրող եւ բարգմանիչ Նիցար Խալիլիին, ի գնահատումն հայ գրականութիւնը արաբ աշխարհին ծանօթացնելու գծով անոր կատարած աշխատանքին: Թարգմանիչն ու բարեւարը հանդիսականներուն ներկայացուց ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկեան մշակութային հիմնադրամի ատենապետ Երուանդ Ազատեանը:

Հանդիսութեան ընթացքին ՀԲԸՄ-ի Կեդրոնական վարչական ժողովի ատենադպիր Պերճ Սեդրակեանը ելոյթով մը ներկաներուն արտայայտուեցաւ զոյգ ժողովներու արդիւնքին մասին եւ ծանօթացուց օրուան գլխաւոր բանախօսը՝ բելգիահայ գաղութի եւ Բելգիայի իրաւաբաններու միութեան երբեմնի նախագահ Էդուար Ժախեանը: Մեր Ժախեանի բանախօսութեան եւս առանցքը կազմեց ՀԲԸՄ-ի կողմէ հայրենիքի բարգաւաճման համար կատարուելիք զոհողութիւններու անհրաժեշտութիւնը:

Հանդիսութեան սկզբնաւորութեան ողջոյնի խօսք առաւ ՀԲԸՄ-ի Յունաստանի Կեդրոնական-յանձնաժողովի ատենապետ Տիգրան Աղասեանը, որ Միութեան նախագահ Լուիզ Մանուկեան-Սիմոնին յանձնեց յուշանուէր մը ի նշան գնահատանքի՝ նախագահին հայրենանուէր գործունէութեան համար:

Ցեղանակին հանդիսաւարն էր ՀԲԸՄ-ի Արքնի «Արքաի Գալփաֆեան» վարժարանի տնօրէն եւ «Նոր աշխարհ» թերթի խմբագիր Զաւեն Գրիգորեանը: ■

Երեկ Կանադայում կայացավ ճակատագրական հանրաքվեն

վճռելու համար տասնամյակներ շարունակվող անջատողական բնույթի վեճը, որն սպառնում էր ֆրանսախոս Քվեբեկն անջատել երկրի մնացյալ մասից: Հանրաքվեն որոշելու է, թե կանադացիները կո՞ղմ են սահմանադրական այն փոփոխություններին, որով կրճատվելու են սենատի իրավասությունները, եւ դաշնակցային իշխանությունը վերաբաշխվելու է բոլոր 10 նահանգների միջեւ: Արդյունքները կամփոփվեն այս առավոտ, կանուխ ժամերին: ■

digitised by A.R.A.R.@

ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց պահեստազորի սպաների զորակոչ անցկացնելու մասին

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության նախագահի 1992 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պահեստազորի սպաների զորակոչի մասին» հրամանագրի, Հայաստանի Հանրապետության կառավարությունն որոշմամբ հանձնարարվել է պաշտպանության նախարարությանը եւ զինկոմիսարիատին՝ աղահովել 1992 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին պահեստազորի առաջին խմբի սպաների զորակոչի անցկացումը:

Պահեստազորի սպաների զորակոչից տարկեսման իրավունք է տրվում՝

ա) նախկինում զինվորական ծառայություն անցած պահեստազորի սպաներին,

բ) գիտական աստիճան ունեցող պահեստազորի սպաներին,

գ) ասպիրանտուրայում, օդինանտուրայում եւ ինտերնատուրայում սովորող, այդ թվում նաեւ հեռակայող պահեստազորի սպաներին,

դ) ծայրամասային, լեռնային գյուղական բնակավայրերի հանրակրթական դպրոցների բարձրագույն կրթություն ունեցող ուսուցիչներին եւ զինղեկներին,

ե) չորս եւ ավելի երեխա ունեցողներին,

զ) առաջին խմբի հաշմանդամ կին ունեցողներին,

է) պահեստազորային սպային, որի հայրը, որդին կամ եղբայրը զոհվել են Հայաստանի Հանրապետության ինքնապաշտպանության ջոկատներում, զինված ուժերում, ներքին գործերի եւ ազգային անվտանգության մարմիններում ծառայողական պարտականությունները կատարելիս, ինչպես նաեւ նախկին ԽՍՀՄ զինված ուժերում ծառայելիս,

ը) կառավարության կողմից հատատված ցանկով նախատեսված աշխատողներին:

Որոշման կատարման հսկողությունը դրվել է ՀՀ պաշտպանության նախարարության վրա:

ՀՀ կառավարության լրատվական ծառայություն

Տաք ջուր միայն երազում

Միջին ընտանիքն ամսական 750 ռ. պետք է վճարի այն ունենալու համար

Երեւանաբնակներն այլեւայլ զրկանքների շարքում կրում են մի աննշան թվացող զրկանք եւս: Քաղաքն արդեն տարուց ավելի է զրկված է տաք ջրամատակարարումից: Պատճառները պարզելու նպատակով դիմեցինք Երքաղխորհրդի ջերմային տնտեսական-արտադրական միավորման տնօրեն Յուրի Թոխունցին: Վերջինս բացատրեց, որ պատճառը միմիայն ֆինանսական դժվարություններն են: *«Եթե անցյալում տաք ջրի վարձը մոտ 1.80 ռ. էր, առայժմ այսօր բաբաքը երկու օր չորսական ժամով տաք ջուր մատակարարելու համար մեր բնակիչներն ստիպված կլինեն վճարել ընչին ամսական 150 ռ., այսինքն՝ հինգ հոգուց բաղկացած միջին ընտանիքը ամսական կվճարի 750 ռ.* (գների վերջին բարձրացման հետ կապված՝ անկասկած կաճի նաեւ այս գումարը): *Նման վճարումներ, կարծում ենք, մեր բնակիչներն ի վիճակի չեն լինի կատարել»*, ասաց պրն. Թոխունցը: Սակայն եթե որոշ բնակիչներ համաձայնության գան եւ վճարեն տաք ջրի վարձը, ջերմային տնտեսությունը կաշխատեցնի փոքր կաթսայատները եւ տաք ջուր կմատակարարի: Պրն. Թոխունցն այն կարծիքին է, որ նման առաջարկ բնակչությանը պետք է անել, թեեւ ոչ բոլորը կհամաձայնեն:

Նման պրոբլեմներ կան նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում, օրինակ, Լատվիայում: «Լատվէներգո» միավորումը տաք ջրամատակարարման հետ կապված օրական կրում է մոտ 9 մլն. ռուբլու վնաս: Միջին հաշվով յուրաքանչյուր 5-րդ մարդ տաք ջրի համար մուծում է 9.50, երբ իրականում պետք է մուծի 430 ռ.: Արդյունքում «Լատվէներգո»ն պարտք է 600 մլն ռուբլի: Ռիգայի դուման ստիպված պետք է ֆինանսավորի տաք ջրի գնացքների փոփոխման հարցը, հակառակ դեպքում սպառողները կզրկվեն տաք ջրից, հայտարարել է «Լատվէներգո»ն: Կանգնատվի բոլորի, այդ թվում ձեռնարկությունների, դպրոցների, հիվանդանոցների, մանկապարտեզների տաք ջրամատակարարումը: Իսկ Երքաղխորհրդի ջերմային տնտեսության արտադրական միավորումը շարունակում է 15 հիվանդանոցների տաք ջրի մատակարարումը: Դրանց ֆանակը համաձայնեցված է առողջապահության նախարարության հետ: Բնակչությանը տաք ջուր մատակարարելու ուղղությամբ իշխանություններն առայժմ ոչինչ չեն ծրագրում, այս հարցը եւս այլ խնդիրների նման փակուղի է մտել:

Եզրակացությունը մեկն է՝ մենք դեռ երկար պիտի բասեռով ու դույլերով լողանանք, պատենական ելանակներով լվացք անենք ու աման լվանանք: Սակայն ոչ ոք չի հաշվարկում թե պատենական ձեւով ադրելը որքա՞ն է նստում մեր տնտեսության վրա: Արդյոք տաք ջրի մատակարարման վրա պետական ծախսերը գերազանցո՞ւմ են ջուր տաքացնելու մասնավոր ծախսերը: Մի՞թե արմատացող հակահիգիենիկ ադրելակերպը վերջիվերջո նորից վնասներ չի պատճառելու նույն պետությանը (հիվանդությունների աճ): Այս եւ այլ բնույթի բոլոր հաշվարկները կատարելուց հետո, կարծում ենք, եւ սպառողները, եւ իշխանությունները կնախընտրեն կենտրոնացված համակարգով տաք ջրի մատակարարումը, որը քաղաքակիրթ պետությանը բնորոշ կենցաղային մակարդակներից է:

Ա. Օ.

Ջերմային մատակարարումը կբարելավվի

ՀՀ կառավարության լրատվական ծառայությունը հայտնում է, որ ծեռք առնված միջոցների շնորհիվ հանրապետությունում մեծացել է էլեկտրաէներգիայի արտադրությունը, որի կապակցությամբ Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունել հոկտեմբերի 26-ից թույլատրել հատուկ կարգավորություն ներկայացնող ձեռնարկությունների, այդ թվում էլեկտրալամպերի, կաբելի եւ էլեկտրամեխանիկական գործարանների աշխատանքը, նրանց օրական հատկացնելով 0,5 միլիոն կիլովատ/ժամ էներգիա, մեծացնել ադեսի գոտու եւ սահմանամերձ շրջանների էլեկտրամատակարարումն օրական 1,5 միլիոն կիլովատ/ժամ, Երեւանում պահպանել հովհարային անջատումների 12-ժամյա գրաֆիկ: ■

Ադրբեջանում նվազում է պետական սեկտորի աշխատողների թիվը

Նախորդ սեպտեմբերի համեմատ այս տարվա 9 ամիսների ընթացքում Ադրբեջանի պետական սեկտորի աշխատողների թիվը նվազել է 4,5 տոկոսով: Ադրբեջանի վիճակագրության տվյալներով, պետական սեկտորի աշխատողները կազմում են հանրապետության աշխատողների ընդհանուր թվի 69,6 տոկոսը: 1991 թ. սեպտեմբերին նրանց թիվը կազմում էր 74,1 տոկոս: Այս տարվա հունվար-սեպտեմբերի ընթացքում Ադրբեջանի ժողտնտեսությունում զբաղված են եղել 2 միլիոն 710 հազար մարդ, այդ թվում՝ պետական սեկտորում՝ 1 միլիոն 888 հազար, կոոպերատիվներում՝ 478 հազար, անհատական սեկտորում՝ 343 հազար մարդ: ■

Բաքվում լույս տեսավ «Բոզ Գուրդ» թերթի առաջին համարը

Թերթի խմբագիր Էնվեր Բոզուսլուի խոսքերով, թերթի նպատակը «Գորշ գայլեր» կազմակերպության գաղափարախոսության հիմքի վրա բոլոր թուրքերի համախմբումն է, ինչպես նաեւ շարժման նկատմամբ սեպտեմբերի վերացումը: «Նոյյան տապան»ը տեղեկացնում է, որ «Գորշ գայլեր»ը միջազգային կազմակերպություն է, որի շտաբ-բնակարանը գտնվում է Ստամբուլում: Թուրքերի ազգայնամոլական շարժում է, արտաքին մամուլում հաճախ հիշվել է որպես ահաբեկչական կազմակերպություն: «Գորշ գայլեր» շարժումն Ադրբեջանում ունի 20 հազար ակտիվ անդամներ: Թերթի նախաձեռնողն Ադրբեջանի ՆԳ նախարար Իսկանդեր Համիդովն է, որն այս կազմակերպության ղեկավար Ալփարլսան Թյուրքեշի հետնորդն է: ■

Ադրբեջան-Իրան սահմանը կհանձնվի Ադրբեջանի տնօրինությանը

Ինչպես հայտնեց Անդրկովկասի սահմանապահ օկրուգի հասարակության եւ լրատվության միջոցների հետ կապի ավագ սպա Ստանիսլավ Կոշեմյովը, Ադրբեջանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ պայմանագրի համաձայն, 1993 թ. ամբողջությամբ կավարտվի Ադրբեջանի արտաքին սահմանների հանձնումը հանրապետության սահմանապահներին: Կոշեմյովը նշեց, թե ադրբեջանա-իրանական սահմանում, մասնավորապես Ջալալաբադի շրջանի Պրիշիբի սահմանապահ ջոկատի տեղանքում, օրական գրանցվում է սահմանի խախտման մինչեւ 100 դեպք, հիմնականում մախսանենգության նպատակով: Կոշեմյովի կարծիքով, անդրկովկասյան սահմանապահ օկրուգի սպաների մի մասը կշարունակի ծառայությունը Վրաստանի եւ Ադրբեջանի սահմանապահ զորքերի կազմում: Արդեն 50 սպա, նրանցից 35-ը՝ ադրբեջանցի, ծառայության են անցել Ադրբեջանի զորքերում: ■

Ծախսականների անպաշտպանվածությունն ունենում է ծանր հետեւանքներ

Հատուկ ուսումնաբուժական արտադրական միավորման հոգեբուժական բաժանմունքի (այդպես է այժմ կոչվում հանրապետական հոգեբուժական հիվանդանոցը) վարիչ Գարիկ Պեդոյանը «Նոյյան տապան»ի թղթակցին հայտնեց, որ վերջին շրջանում հոգեկան խախտումներ եւ հոգեկան հիվանդություններ տոկոսային հարաբերությամբ ավելի շատ հանդիպում են Ադրբեջանից եւ ԼՂՀ-ից փախստականների մոտ, որոնք ծանր սրես են ադրել: Պեդոյանի խոսքերով, հոգեկան խախտումներով հիվանդներն այս տարի ավելի շատ են, քան նախորդ տարիներին: Ներկա դրությամբ ավելի շատ են երիտասարդների հոգեկան խանգարման դեպքերը: ■

Վրաստանին օգնություն է առաջարկվել

Վրաստանում տեղի ունեցած երկրաշարժից մի քանի ժամ անց ՀՀ վարչապետ Խոսրով Հարությունյանը հեռախոսային խոսակցության ժամանակ Վրաստանի փոխվարչապետին օգնություն առաջարկեց փրկարար աշխատանքների համար: «Սպիտակ» փրկարար ջոկատը պատրաստ է մեկնել աղետի վայր: ■

Կարմիր խաչը մտադիր է օգնել Ղարաբաղին

Երեկ Հայաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Մանվել Սարգսյանն ընդունեց Երեւանում գտնվող Միջազգային Կարմիր խաչի պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի ժողովրդին մարդասիրական օգնություն ցույց տալու հետ կապված հարցեր: ■

Պետական հեղաշրջման փորձ Նախիջեւանում

Թերեւս էականը Հայաստանի նկատմամբ դիրքորոշումների տարբերությունն է

Վերջին մի քանի օրերին Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունները վկայում են, որ Ադրբեջանի եւ նրա մաս կազմող Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ գոյություն ունեն լուրջ տարաձայնություններ, որոնք ավելի են խորացել Ադրբեջանի ժողովրդական ճակատի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հանրապետության նախագահ ընտրվելուց հետո: Ի՞նչ է տեղի ունեցել Նախիջեւանում: Շաբաթ օրը, հոկտեմբերի 24-ին, ժամը 16-ին ԱԺՃ-ի զինված կազմավորումները (մոտ 200 հոգի) գրավել են Նախիջեւանի ներքին գործերի նախարարության շենքն ու հեռուստակենտրոնը: Ներքին գործերի նախարարության շենքի գրավումը նպատակ ուներ անհրաժեշտ պայմաններ աղահովել մեկ ամիս առաջ Բաքվում նշանակված եւ այդպես էլ Նախիջեւանի Գերագույն մեջլիսի կողմից չհաստատված Նախիջեւանի ներքին գործերի նախարար Սիավուշ Մուստաֆաեւի պարտականությունների կատարման համար: Իսկ հեռուստաաղիոկենտրոնի գրավման նպատակը, համաձայն Ադրբեջանի ներքին գործերի նախարարության հայտարարության, բարդ իրավիճակում հեռուստատեսության անկողմնակալության աղահովումն էր:

Ինչպես հայտարարել է Նախիջեւանի Գերագույն մեջլիսի նախագահ Հեյդար Ալիեւը, Սիավուշ Մուստաֆաեւը ոչ մի կապ չունի իրավապահ մարմինների հետ եւ մասնագիտությամբ ֆիզկուլտուրայի ուսուցիչ է: Իրականում, ըստ նրա, Նախիջեւանում շաբաթ օրը տեղի է ունեցել պետական հեղաշրջման փորձ:

Նույն օրը երեկոյան ժամը 21-ին ԱԺՃ-ի զինված կազմավորումներն ազատել են Նախիջեւանի ներքին գործերի նախարարության եւ հեռուստաաղիոկենտրոնի շենքերը: Դա տեղի է ունեցել այն բանից հետո, երբ Ալիեւը վերջնագիր է ներկայացրել ժողճակատի զինյալներին՝ սպառնալով շենքերը չազատելու դեպքում Գերագույն մեջլիսի շենքի առջեւ հավաքված մոտ 30 հազար կողմնակիցների հետ միասին շարժվել դեպի զավթված շենքերը: Այնուամենայնիվ, ինչպես հայտնել է Նախիջեւանի դեկավարը, եթե ներքին գործերի նախարարությունից զինյալները դուրս են եկել կամովին, ապա հեռուստաաղիոկենտրոնում տեղի է ունեցել փոխհրաձգություն, որին ԱԺՃ-ի կողմից մասնակցել է նաեւ զրահատեխնիկա: Ընդհարման ժամանակ վիրավորվել են մի քանի միլիցիոներներ:

Հեյդար Ալիեւը «ԻՖ»ի թղթակցին տված հարցազրույցի ժամանակ մատնանշել է նախագահ Էլչիբեյի անգործությունը, որը «ուրբաս» հեռախոսազրույցների ժամանակ Ժողճակատի անդամների հակասահմանադրական գործողությունների դադարեցման պահանջներին այդպես էլ որոշակի պատասխան չի տվել: Ալիեւը հայտնել է նաեւ, թե հաջորդ օրը նշանակված Նախիջեւանի Գերագույն մեջլիսի արտահերթ նիստի ժամանակ քննարկվելու են պետական հեղաշրջման փորձի, ինչպես նաեւ ինքնավար հանրապետության տարածքում ԱԺՃ-ի բոլոր կազմակերպությունների գործունեության դադարեցման հարցերը:

Այնուամենայնիվ, ինչպես տեղեկացնում են լրատվական գործակալությունները, կիրակի օրը Նախիջեւանի Գերագույն մեջլիսի արտահերթ նիստը քվորում չլինելու պատճառով տեղի չի ունեցել. ժողովրդական ճակատի պատգամավորական խմբակցությունը չի ներկայացել: Գործակալությունները տեղեկացնում են նաեւ, թե կիրակի օրը Բաքվում տեղի է ունեցել ԱԺՃ-ի մեջլիսի գործկոմի արտահերթ նիստ, որտեղ քննարկվել է Նախիջեւանի իրադրությունը: Մանրամասնություններն առայժմ հայտնի չեն:

Հիշեցնենք, որ հայ-ադրբեջանական հակամարտության հատկապես վերջին շրջանում իրադրությունը հայ-նախիջեւանյան սահմանում համեմատաբար ավելի կայուն է եղել՝ առավելապես անմիջական երկկողմ բանակցությունների շնորհիվ: Հայտնի է նաեւ, որ հարկադիր շրջափակումների հետեւանքով իրավիճակը Նախիջեւանում խիստ ծանր է, եւ փաստորեն Հայաստանի ու Ղարաբաղի շրջափակումների անխուսափելի հետեւանքների ամբողջ ծանրությունն ընկնում է Նախիջեւանի վրա: Իսկ վերջինիս դեկավարը վերջերս տված մի հարցազրույցի ժամանակ նույնիսկ հայտարարել է, թե Նախիջեւանի շրջափակման մեղավորը ոչ թե Հայաստանն է, այլ ավելի շատ Ադրբեջանը: Հայաստանի քաղաքական դիտորդներն այն կարծիքին են, որ Նախիջեւանի վերջին իրադարձություններն ուղղակի հետեւանք են հայ-նախիջեւանյան անմիջական բանակցությունների ընթացքում ձեռք բերված նկատելի հաջողությունների, որոնք ոչ մի կերպ ձեռնտու չեն Ադրբեջանի-Ղարաբաղի խնդրում կոշտ դիրքորոշման կողմնակից դեկավարներին: Չի բացառվում, որ այս ամենը պարզապես քաղաքական խաղ է, որը նպատակ ունի ցույց տալ, թե Ադրբեջանի եւ Նախիջեւանի միջեւ գոյություն ունեն հակասություններ, ուստի նրանցից մեկի քայլերի ծանրությունը չի կարող ընկնել մյուսի վրա:

Ա. Բ.

digitised by A.R.A.R.@

Ադրբեջանցիների արկածները Մոսկվայում

«Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթն անդրադարձել է Մոսկվայում բնակվող կամ ժամանակավորապես ապրող կովկասցիների, հատկապես ադրբեջանցիների խնդրին: «Շրկվելով իր նախկին հոդատակների նկատմամբ իշխանությունից, գրում է թերթը, Ռուսաստանն այժմ սարսափով է նայում կովկասյան տարածքներին, փորձելով հաշտեցնել բնակավայրերին»:

Ադրբեջանի 100-150 հազար, քաղաքացի գտնվում են այստեղ որպես հյուր կամ գրաղվում են առեւտրով: Մոսկվայում մշտապես բնակվող ադրբեջանցիները միավորված են տարբեր ընկերությունների մեջ՝ գիտական մտավորականության, խոշոր բիզնեսի ներկայացուցիչների, ռամկավարորեն տրամադրված երիտասարդության եւ այլն: Մոսկվա եկողները հիմնականում ոչ մի ձեւով կազմակերպված չեն: Եւ երկրորդը. Հուսեյնովը չէր խոսացել Մոսկվան վերածել Բեյրութի: Կցորդի կարծիքով, նա միայն անհանգստություն է արտահայտել, որ Մոսկվան չվերածվի Բեյրութի, եւ քանի որ նա լավ չի տիրապետում ռուսերենին՝ նրա ասածը սխալ է հասկացվել: Վերջապես երրորդը՝ Ադրբեջանի ներքին գործոց նախարարի բառերի իմաստը կողմից կերպով աղավաղվել է՝ ոչ ոք չի պատրաստվում ռուսներին Բաքվից արտաքսել որեւէ պատրվակով: Ի հաստատումն իր բառերի, մամուլի կցորդը բերեց մի քանի փաստեր Մոսկվայում ադրբեջանցիներին հալածելու մասին:

Նա իրադրությունը այսպես մեկնաբանեց.

– Թմբադեղեր եւ զենք վաճառողներին չեն խանգարում աշխատել այնտեղ, ուր նրանց խելքին փչում է: Նրանց ոչ ոք ձեռք չի տալիս եւ չի ծեծում: Օմոնի գործողությունները «աղավաղում» են այն ուժերը, որոնք շահագրգռված չեն Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ լավ հարաբերություններով: Հակաադրբեջանական կամպանիան սկսվեց այս ամռանը եւ հարմարեցվել է որոշակի ուժերի կողմից բարեկամության եւ համագործակցության մասին ռուս-ադրբեջանական պայմանագրի ստորագրմանը. գտնում են ադրբեջանական դեսպանությունում: Մենք միշտ ընդհանուր լեզու ենք գտնում, մանավանդ, որ ամբողջ Կովկասում ավելի հիշ ռուսներ կան, քան Ադրբեջանում, որտեղ նրանք 500 հազար են: Այստեղ գոյություն ունեն նույնիսկ զուտ ռուսական գյուղեր եւ միլիոնատեր կոլտնտեսություններ: Հանրապետությունում չկա եւ երբեք չի եղել ոչ մի հակառուսական տրամադրություն, հունվարյան դեպքերից հետո Բաքուն լքած փախստականների երկու-երրորդը հետ վերադարձավ:

Ինչ վերաբերվում է մոսկովյան շուկաներում իրադրությանը եւ այսպես կոչված ադրբեջանական մաֆիային, որն իբր զավթել է շուկաները, ապա ադրբեջանական դիվանագետը գտնում է, որ այդ խնդիրը մտացածին է: Ադրբեջանը միշտ տառապել է մրգերի եւ բանջարեղենի գերարտադրությունից, ուստի այն արտահանում էր Ռուսաստան: Այժմ գները բարձրանում են, փոխադրման բանկության, ճանապարհին եւ առեւտրի վայրում շորթումների պատճառով: Մոսկովյան շուկաների տերն ու տիրակալը ոչ թե ադրբեջանցիներն են, այլ, ինչպես արտահայտվեց Հաջիեւը, «մոսկովյան կառուցվածքների ներկայացուցիչները», սրանք այսօր պարզապես կանաչ լույս են վառել ադրբեջանցիների առաջ եւ դրանով լավ հարստանում են, ահա հենց նրանք են իսկական տերն ու տիրակալը: Երբ նրանք ցանկանան, վաղը այստեղ առեւտուր կանեն չեչենները, եւ գուցե, լիտվացիները...

Հետաքրքիր են թերթի եզրահանգումները իրենց մոսկովյան յուրահատկությամբ:

«Անցյալներում ճանապարհորդելով Կովկասում, ես միշտ զարմանում էի ժողովուրդների «բարեկամական ընտանիքում» տիրող ազգային անհանդուրժողականության վրա: Հիշում եմ Նալչիկում կարտոֆիլ վաճառող ադրբեջանցին առաջին հերթին հայտնեց, որ չի սիրում հայերին: Գազայում տանտեր աբխազը. բնական է, չի սիրում վրացիներին: Թբիլիսիում չէին սիրում աբխազներին, հայերը բոլորից խուսափում էին: Օսերը ինչ-որ բանում կասկածում էին վրացիներին: Իշխանատենչության հատկանիշներն այստեղ ու այնտեղ ընկնում են ազգայնամոլության պարարտացված հողի վրա: Թե ինչով է այս ամենը վերջանում՝ բոլորս տեսնում ենք: Այժմ փորձում են Ռուսաստանին էլ ներքաշել ժողովուրդների զազրելի սպանդի մեջ: Մյուս կողմից, չպետք է թույլ տալ, որ հենց մեր քաղաքներում թքեն մեր երեսներին, միլիցիան պետք է գործի ամենայն վճռականությամբ: Եւ միայն այն ժամանակ կարելի կլինի ասել, որ Կովկասից ներմուծվող հանցագործության ալիքը կարելի է հաղթահարել բացարձակապես օրինական միջոցներով»: ■

Ղարաբաղի մայրաքաղաքը վերականգնվում է

ԼՂՀ-ի մայրաքաղաքում վերականգնողական աշխատանքները դանդաղորեն տեմպ են հավաքում: Ինչպես այսօր «Սնարք»-ի թղթակցին հայտնեց Ստեփանակերտի գործադիր իշխանության ղեկավար Յուրի Ներսիսյանը, վերջին մեկուկես ամսվա ընթացքում վերականգնվել են մոտ 60 բնակելի տներ: Ընդհանուր հաշվով քաղաքի 200 տներ այդ վերականգնման կարիքն են զգում: Միաժամանակ, չնայած պատերազմին եւ շինանյութի անբավարարությանը, սկսվել են գրադարանների, երաժշտական դպրոցների, այլ մշակութային հաստատությունների վերականգնման աշխատանքները: Ներսիսյանի խոսքերով, այդ նպատակներին հատկացվել է 20 միլիոն ռուբլի: Շինանյութով եւ վառելիքով ծանրակշիռ օգնություն է ցույց տալիս Հայաստանի կառավարությունը: ■

Սեփական արյան համը

Եզոպոսի առակներից մեկը պատմում է երկու գորտերի մասին, որոնցից մեկն ապրում էր ճահճում, իսկ մյուսը՝ սակավաջուր տեղում: Ճահճում ապրողն անընդհատ հորդորում էր մյուսին, որ սա իր անհարմար տեղից տեղափոխվի իր մոտ, քանի որ իր բնակարանն ավելի ապահով ու հարմար էր: Սակայն մյուս գորտը միշտ մերժում էր, ասելով, թե իր համար այդպես ավելի լավ է, մինչեւ որ պատահաբար անցնող սայլը տորեց նրան:

Գորտը՝ գորտ, բայց որ մենք այս առակի բազում դրսեւորումներն ենք ամփոփում մեր մեջ, փաստ է: Եւ ոչ ոք, մեզնից բացի, նման ճակատագրից մեզ չի կարող ապահովագրել: Սակայն ուզո՞ւմ ենք մենք արդյոք ապահովագրվել այդպիսի վախճանից... Մեզ կրնկակոխ հետապնդող ու մեր ետ ու առաջ կատարվող քայլերն ակնդետ հսկող պատմությունը ցույց է տալիս, որ բնավ էլ շահագրգռված չենք մեզ ապահովագրելու ցանկությամբ:

Պատմությունը դասեր է տալիս կյանքի հետագա ճանապարհն ավելի գիտակից ու անվտանգ անելու համար: Բայց երբ սկսում ես այդ դասերն օգտագործել ժամանակին համընթաց կատարվող մեկնաբանությունները հաշվի չառնելով, այդ դեպքում պատմությունը դառնում է ճիպոտով վարժապետ, որն սպիտակ է իր ասածի շրջանակներից դուրս չգալ, իսկ ժողովուրդը՝ միայն ա՛յդ վարժապետի ասածներն ընթռնող աշակերտ:

Ահա այդ պատմություն կոչվածը մեզ մի զզվելի ու չարագուշակ սովորության տեր ու տիրական է դարձրել՝ գլուխներս մեկ աջ ենք բերում, մեկ ձախ, մեկ հյուսիս ենք նայում, մեկ արեւմուտք. Բյուզանդիան, Պարսկաստանը, Ռուսաստանը փնտրելուց հոգնած՝ հիմա հայացքներս ավելի հեռուներն ենք ուղղում... Չենք վախենում գլխապտույտ ունենալուց ու դրանից գետին ընկնելուց, որովհետեւ մեր պատմությունն ասում է, որ մենք սիրում ենք այդ ձեւով գետնին հայտնվել ու կոմի, ճակատամարտի, պատերազմի միջոցով վեր կենալ:

Գետնից բարձրանալու երկու ձեւ կա՝ մեկը, երբ ձեռքիցդ բռնելով քեզ օգնում են բարձրանալ, մյուսը՝ երբ քեզ «քացով» խփում են, որ դու ցավից ինքդ փորձես ելնել: Մենք սովոր չենք օգնելով բարձրանալ, մեր մեջ մտել է ցավից տառապելով բարձրանալու ձեւը, մեր բերանի համար սովորական ու անբաժանելի է դարձել արյան աղի համը: Եւ չնայած արյան աղի համից ձայնալարերը հաճախ խզվում են, ու մեր օգնության ճիչը կոկորդից հազիվ է դուրս գալիս, այդուհանդերձ մենք սիրում ենք արյան համը: Արյունարբու չե՞նք, մեր սեփական՝ արյան համն ենք սիրում:

Բայց մենք մեր արյան համը ավելի լավ ենք զգում, երբ մեզ խփում են: Այդ պատճառով էլ մեզ հանգիստ չենք զգում, երբ մեզ չեն հարվածում: Մերը մեզ խփող փնտրելն է, որն սկզբում բարերար է լինում, հետո տեր, իսկ ամենավերջում՝ ստրկատեր:

Ու սպասում ենք, թե երբ են մի ուժեղ հարված տալու, որ փորձենք վեր կենալ, ինչպես լծկանը չի ուզում տեղից շարժվել առանց մեջքին ճիպոտի հարված ստանալու:

Ցավի զգացողությամբ ապրելը դարձել է մի ողջ ժողովրդի կենսաձեւ: Եւ ամբողջ աշխարհով մեկ օրինակում ենք, թե «մեր հայրենիքը բշվառ, անտեր» հավատարեցնելով այն ներկայիս կացությանը «բնորոշ» «ազատ, անկախ» արտահայտություններին: Այդ հավատարությանն ապրելն ոչ միայն մեր ժողովուրդը, այլեւ բոլորն են ընթռնումով մոտենում... քանզի գիտեն մեր ցավատենչությունը:

Անզգայացած մարդու կենդանությունը ստուգելու համար ստուգում են նրա ցավի զգացողությունը՝ ինչ-որ միջոցով նրա կյանքի սառած ոիթմը խաթարելով:

Մեր ցավասիրությունն աչքի առաջ ունենալով՝ այս ու այն կողմից զանազան խթանիչներ են հրամցնում՝ ցավի հերթական դոզան ներարկելով, որ չմոռանանք դրա գոյության մասին: Իսկ մենք մոռացողը չե՞նք, քանզի երբ նույնիսկ արտաքին «մեղավորներ» չլինեն էլ, մենք ինքներս կփորձենք մեզ ցավ պատճառել: Քանզի այդ բացիկն արդեն մեր արյան, մեր գենի մեջ է ներարկվել առհավետ ու հանապազօրյա պահանջմունք դարձել:

...Սակավաջուր վայրում ապրող գորտը չէր ուզում հրաժարվել իր անհարմար ու անապահով հանգրվանից: Իսկ ճանապարհով անցնող սայլը նրան ընդհանրապես զրկեց իր օթեւանից եւ նրա անապահովությունը, անհարմարությունը զգալու ունակությունից ու հնարավորությունից:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ ՏՊԱԳՐՎԱԾԻՆ

Խիստ «սկզբունքային» հրապարակում

«Ազգ» թերթի 1992 թ. հոկտեմբերի 9-ի համարում զետեղել էիք «Խիստ «սկզբունքային» թատրոն կամ ինչպես պարմանուհուն չթողեցին ներկայացման» թղթակցությունը, Ռ. Հակոբյան ստորագրությամբ: Մենք չգիտենք, թե ով է այս պարոնը, բայց մի բան պարզից պարզ է՝ նա հանդես է եկել «մարդու իրավունքների պաշտպանությամբ», տվյալ դեպքում՝ 13-ամյա «պարմանուհու», եւ, միաժամանակ, արհամարհել իրավունքը թատրոնի, որի ետեւում նույնպես մարդիկ են կանգնած եւ ոչ մեկ երկու, այլ մի քանի տասնյակ:

«Պարմանուհու» հուզմունքն այնքան է ազդել պարոնի վրա («Ներկայացումը դիտելու տրամադրություն այլեւս չկար»), որ նա աղջկա եւ մոր հետ հեռացել է թատրոնից՝ առանց հետ նայելու:

Ընթերցողին հիշեցնենք «աննշան միջադեպը», որը բոլորովին էլ աննշան չէ: Երեւանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի հսկիչները վերջերս 13-ամյա աղջկան թույլ չտվեցին դիտելու «Հուլիոս Կեսար»-ը, որովհետեւ երեկոյան ներկայացումներին երեխաների մուտքն արգելված է՝ ե՛ւ հանդիսատեսի ուշադրությունը բեմից չշեղելու, ե՛ւ դաստիարակչական նկատառումներով: Մա նորություն չէ, առավել եւս՝ հմահաճույք կամ վարչարարություն: Պետական հանձնարարականներով այսպես են ափսառում գրեթե բոլոր թատրոնները, բացառությամբ գուցե Փարիզի: Իսկ մենք տակավին Փարիզ չենք, Ռ. Հակոբյանը պետք է մի հիշ սպասի՝ իր եւ իր սեփական երեխաների համար...

Թերեւս կարելի է բացառություն անել, բայց դա վերածել օրինաչափության՝ կարծում ենք, չի կարելի, չի կարելի հանուն ե՛ւ մեծերի, ե՛ւ փոքրերի: Մենք մտածել ենք նաեւ երեխաների մասին, որոնց համար երեկոյան թատրոնում գործում է լավ կահավորված մանկական սենյակ՝ հմուտ դաստիարակչուհու ղեկավարությամբ թատրոն եկած ծնողների երեխաները կարող են խաղալ, հեռուստացույց դիտել:

Հոդվածագիրը մեզ հիշեցնում է, թե ինչ է ասել ռուս թատերական գործիչը:

Մենք էլ նրան հիշեցնենք նշանավոր զորավարի ասածը. «Բանակում պիտի լինի այնպիսի կարգապահություն, ինչպես թատրոնում»: Մեծահոգաբար թույլ տվեք հետեւելու թատրոնի կարգապահությանը, պարոն հոդվածագիր:

Մենք ներողություն ենք խնդրում թատրոն այցելած աղջկանից եւ նրա մորից՝ վշտացնելու համար, եւ հավատում ենք, որ նրանք ըմբռնումով կվերաբերվեն մեզ: Խոստանում ենք «Հուլիոս Կեսարը» մեկ անգամ ներկայացնել ցերեկային ժամերին՝ դպրոցականների առջեւ, եւ նրանց էլ հրավիրել թատրոն: Սիրելի մայր եւ աղջիկ, զանգահարեք 52-47-23 եւ հայտնեք ձեր անունները ու հեռախոսահամարը:

Երեւանի Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն

Հայաստանը դադարեցրել է ֆիլտրի առաքումը Գրոզնո

Գրոզնոյի ծխախոտի գործարանը Հայաստանից ֆիլտրի մատակարարումների դադարեցման պատճառով 50 տոկոսով կրճատել է ծխախոտի արտադրությունը, բողարկելով առանց ֆիլտրի սիգարետներ: ■

Շտապ օգնության աշխատողներին սնվելու համար 100-ական ռուբլի

Մոսկվայի քաղաքագլխի հրամանով, հոկտեմբերի 1-ից շտապ օգնության աշխատողները կստանան 100-ական ռուբլի՝ սնվելու համար: Մոսկվայի Գլխավոր բուժվարչությանը թույլատրված է մեծացնել դոտացիան մթերքի գների աճին համապատասխան: ■

digitised by A.R.A.R.@

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

«ԱՐԹՈՒՐ-Մ.»-Ն ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Հայերն ընդդեմ հայերենի

Գերագույն խորհրդի նիստերի դահլիճում բուղբ բաժանելը նոր բան չէ. օրինագծեր, որոշումների նախագծեր, հայտարարություններ, առաջարկներ՝ փաստաթղթերի մի իսկական հեղեղ: Բայց մեկ էջանոց այն դիմումը, որ բաժանվեց հոկտեմբերի 19-ի երեկոյան, արտառոց էր մեր այս երկուսուկես տարվա աշխատանքների համար: Դեռևս ոչ մի օրենքի ընդունման շեմին խորհրդարանում ոչ մի այսպիսի փաստաթուղթ չէր տարածվել՝ օրենքը մերժելու այդքան կրքոտ կոչով:

Իսկ ի՞նչ օրենք էր նախաստրասվում քննարկել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը: Գուցե իրո՞ք ինչ-որ վտանգավոր բան կար, եւ անհրաժեշտ էր անհապաղ ահազանգել: Գուցե ահավոր մի աղետաբեր՞ էր կախվել հայոց ազգային շահերի վրա: Գուցե ԳԽ պատգամավորները պատրաստվում էին ազգակործան մի փաստաթո՞ղթ ընդունել, եւ ամեն մի հայրենասեր պետք է, թեկուզ իր կյանքի գնով, փակեր այդ դավաճանների ճանապարհը:

Ոչ, սիրելի ընթերցող, Գերագույն խորհուրդը հաջորդ օրը պիտի քննարկեր «Լեզվի մասին» օրենքի նախագիծը: Ի՞նչ, խնդիր չպիտի՞ լիներ: Բոլորը կո՞ղմ են լեզվին: Ինքնին հասկանալի՞ է ամեն ինչ: Դեռ մի բան էլ ուզացե՞լ է օրենքը: Ճիշտ է, բյուրաղասիկ ճիշտ: Ուրեմն, ի՞նչ: Կարդանք պատգամավորներին բաժանված «բուղթը»:

Վերնագրված է «Հիմնավորում» «Լեզվի մասին» օրենքը չընդունելու համար»: Հը՞, տարօրինա՞կ է: Իհարկե: Տեսնո՞ւմ եք, ոչ թե այս նախագիծը չընդունելու մասին, որը, ասենք, վատն է, այսինչ եւ այսինչ թերություններն ունի (ի դեպ, ներկայացված տարբերակն էապես տարբերվում է խորհրդարանում քննարկած նախկին տարբերակից), այլ առհասարակ որեւէ օրենք չընդունելու:

Իսկ ինչո՞ւ, ո՞րն է հիմնավորումը: Բայց նախ տեսնենք ո՞վ է հիմնավորողը: Նշված է՝ «Արթուր-Մ.» գիտավերլուծական կենտրոն: Նաեւ կնքված է, իսկ կնիքի վրա կարդացվում է (հայերեն, ռուսերեն, անգլերեն)՝ «Արթուր-Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, գրանցված Երեւանի Արաբկիրի շրջանում: Միայն այսքանը այդ «սահմանափակ վերլուծականի» մասին: Մեկ էլ՝ պարզեցնենք Գերագույն խորհրդում «Հիմնավորումը» տարածողին, դա հանրահայտ պատգամավոր Ի-գոր Մ.-ն էր: Վերջինս, թեպետ հայտարարել է, որ ինքը նույնպես ոչ մի գաղափար չունի «Արթուրի» մասին (նրանք բաժանում է), սակայն վարվում էր միայն իրեն հասկանալի տրամաբանությամբ՝ «բարաբը» բաժանում էր «մեջլիսի» ոչ բոլոր անդամներին. օրինակ, չէր տվել ԳԽ կրթության եւ գիտության, լեզվի եւ մշակույթի հարցերի հանձնաժողովի անդամներին (հանկարծ ու ինֆարկտ ստանային):

Արդ, տեսնենք ինչ է հիմնավորում «Արթուրը»: Ասում է, թե լեզվի մասին օրենքը *«հիմնականում ուղղված է ռուսաց լեզվի դեմ»*, ուստի *«մշակութաբանական հեռահար եւ մահացու հարված կլինի հայ ազգի համար»*, *«հայ ազգը կդարձնի գավառական ազգ, ինչը մեր պայմաններում հավասարազոր է մահվան»*: Ի՞նչ, ասում եք, կատարյալ զառանցանք է, ընթերցող: Դարձյալ ճիշտ եք: Այնուամենայնիվ, միայն տեսնենք, սիրելի ընթերցող, թե որոշ պատգամավորներ ի՞նչ անբախույց ուրախությամբ ընդունեցին Արթուրի «գիրը»: Այնպես որ, եկեք կարդանք բուն օրենքի նախագիծը: Ահավասիկ 3-րդ հոդվածի առաջին մասը. *«Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն իրավունք ունեն սովորել, սովորեցնել եւ ոչ պետական նոյատակներով գործածել ցանկացած լեզու եւ բարբառ»*: Պարզ չէ՞ գրված: Կարիք կա՞ շարունակելու:

«Արթուր-Մ.»-ն հիմնավորում է, թե իբր «օրենքը մեծաթես կարագացնի ազգի 70 տոկոսի ուծացումը», «ընկերվարական եւ քաղաքական հակամարտությունների հիմք կծառայի», կիարվածի Հայրենիք-Սփյուռք կապերին: Օրենքի նպատակը տրամագծորեն այլ է: Խնդրեմ, 1-ին հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը. *«Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում աջակցում է ազգային փոքրամասնությունների լեզուների գործածությունը... Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս ապրող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանն ու տարածմանը»*: Այսպիսի պարտավորություններ սանձնելո՞վ է պե՞ս համարձակվեցին Ղազախստանում փոքրամասնություն կազմող դազախները (բնակչության 36 տոկոսը, մինչդեռ ռուսները կազմում են 40,8 տոկոս) քաղաքացիության ձեռքբերումը կապել դազախերենի պարտադիր իմացության հետ, եւ ինչպես չհիշենք (համոր մեզ), որ 1978 թ. ՀԽՍՀ Սահմանադրության մեջ էլ հայերենն ամրագրվեց որպես պետական լեզու ոչ այնքան մեր մշավորականների, հատկապես լեզվաբանների (սեփական զավակներին զանգվածաբար ռուսական դպրոց տվող), այլ... վրացիների ըմբոստության շնորհիվ): «Արթուր-Մ.»-ն շարունակո՞ւմ է հավատացնել, թե շուտով Իսրայելում ռուսերենն էլ է դառնալու պետական լեզու: Չգիտեմ, չգիտեմ, գուցե Իսրայելի պետական այրերին համոզի՞ Արթուրի «Հիմնավորումը»: Առայժմ փաստն այն է, որ եբրայերեն չիմացողը հատուկ հարկ է վճարում, քաղաքացիություն չի կարող ստանալ եւ այլն:

Վերջ ի վերջո, ի՞նչ է առաջարկում «Արթուր-Մ.»-ն: Ահավասիկ բառացի. *«Հաշվի առնելով վերոհիշյալը, առաջարկվում է.*

1. չընդունել «Լեզվի մասին» օրենք:

2. ՀՀ ԳԽ համապատասխան հանձնաժողովներին եւ ՀՀ համապատասխան կազմակերպություններին պատվիրել ՀՀ մշակութային ռազմավարության ներկայումս մշակվող համակարգում ստեղծել նաեւ լեզվական ծրագիր, որը պետք է ունենա գաղափարական, մշակութային, սոցիոլոգիական, հոգեբանական, տնտեսական (բայց ոչ տնտեսական ճնշման), ինֆորմացիոն խթաններ»:

Բան հասկացա՞ք: Ասենք թե Գերագույն խորհուրդը «պատվիրում է» ստեղծել, բայց ի՞նչը. այդ «լեզվական ծրագիրն» ի՞նչ է, որը դեռ այդքան էլ «խթաններ» պիտի ունենա: Բառերի կույտ է՝ հավանաբար ռուսերենից թարգմանված: Կարո՞ղ է լինել ծրագիր առանց իրավական-օրենսդրական հիմքի, ինչն էլ օրենքն է տալիս: Այդ մշակութային ռազմավարության համակարգն ո՞վ է մշակում, չլինի՞ դարձյալ «Արթուր-Մ.»-ն: Ասված հեռու տանի: Հետո, եթե Արթուրն ու իր համախոհներն այդքան ընդգրկուն գաղափարներ ունեն, էլ ո՞ւր են դեռ ու դեռ ընկել, պարտիզանական մեթոդների դիմել: Ինչո՞ւ չդիմեցին անմիջական հասցեատիրոջը՝ ԳԽ կրթության եւ գիտության, լեզվի եւ մշակույթի հարցերի մշտական հանձնաժողովին: Տեղը չգիտե՞ն:

Կարճ ասած, հարգելի ընթերցող, «Արթուր-Մ.»-ի եւ հարգարժան կոմպանիայի (թե խորհրդարանի ներսում, թե դրսում) «առաջարկվում է»-ի նպատակը սոսկ 1-ին կետն է՝ չընդունելը. 2-րդը լոկ պատշաճության տուրք է, ավելի ստույգ՝ «բոզ փչելու» ձեւ:

Հայերն ընդդեմ հայերենի՞: Այն էլ հայոց լեզվի համար այս ծանր պայմաններո՞ւմ:

Լավ, «Արթուր-Մ.»-ն եւ նրա սահմանափակ գիտավերլուծական ուղեղ-հիմնավորմամբ խանդավառ պատգամավորները (կրկնում եմ, կան այդպիսիք, ցավոք կան. վկան՝ քվեարկությունների արդյունքները) չե՞ն տեսնում մեր երկրի առջի լեզվական իրավիճակը, չե՞ն զգում հայերենին սպառնացող աղետը: Այսինքն, ո՞նց պիտի տեսնեն, եթե քանի-քանի պատվարժան հայ մտավորականներ վերջերս գրիչ են վերցրել ձեռքը մեն-միայն այն նպատակով, որ ասեն, թե ամեն ինչ լավ է, անհանգստանալու հիմք չկա, ով էլ սա չի հասկանում, ուրեմն անուղղելի ծայրահեղական է, «ռուսասյաց» է, հազար ու մի վատ բան է:

Լեզվի օրենքի նախագծին նախորդ անգամ «դեմ» քվեարկած մի պատգամավոր ինձ բացատրում, համոզում էր, թե հայերենն... ինքն իրեն պիտի պաշտպանի: Անհերթությունն: Արդեն ասացի, որ Ֆրանսիան նախանձելի հոգատարություն է դրսեւորում պետական լեզվի նկատմամբ, մեզ պես անտեր չի թողել լեզուն: Ինչո՞ւ: Խնդիրը, եկեք հասկանանք, այս կամ այն լեզվի ուժեղ կամ թույլ լինել չէ (գրաքիչ, ճոխ, հարուստ եւ այլն). նման հակադրությունն առհասարակ անիմաստ է լեզվի եւ, հետեւաբար, ազգի գոյության եւ զորության տեսակետից: Այսօր ամերիկյան մշակութային ներխուժման (կինի դա Ֆրանսիան թե Հայաստանը) հարվածային ուժը հենց լեզուն է՝ անգլերենը, բազմաղասիկ հզորացած մեզ համար առայժմ անհասանելի տեխնիկական միջոցներով: Մի՞թե դժվար է հասկանալ, որ համակարգիչների հաղթարշավը նաեւ անգլերենի ներթափանցումն է աշխարհի բոլոր ծայրերը՝ այստեղից բխող էքոնոմիկային ավիրումներով հանդերձ: Ուստի, միամտություն չէ՞ արդյոք, հանցավոր անհոգություն չէ՞ աղավինել լեզվի ինքնապաշտպանությանը: Հայոց լեզվի մեջքին պետք է կանգնի հայոց պետությունը. եթե վերջինս այլեւս ուրիշ բան էլ չանի (դիտավորյալ եմ ծայրահեղացնում, հույս ունեմ, վստահ եմ, որ պիտի անի), գոյությունն արդարացված է:

Որպես ամփոփում՝ ես էլ իմ հիմնավորումը բերեմ: «Արթուր-Մ.»-ն եւ այլոք համաձա՞յն են, որ հայ երեխան Հայաստանում (եթե հնարավոր է, ամենուր, բայց մեր օրենքը նման հավակնություններ չունի) պիտի կրթվի եւ դաստիարակվի հայերեն: Համաձա՞յն են, որ Հայաստան երկրի պաշտոնյան պարտավոր է հայերենին տիրապետել: Համաձա՞յն են, որ երկրի պետական հաստատություններում գործավարությունը պիտի լինի հայերեն (ազգային փոքրամասնությունների համար՝ անելով համապատասխան բացառություններ եւ տրամադրելով անհրաժեշտ արտոնություններ): Համաձա՞յն են: Կարծում եմ՝ այո: Համենայն դեպս, այս սկզբունքների դեմ ոչ մի ընդդիմախոս ոչ մի խելամիտ հակափաստարկ չի բերել:

Լեզվի օրենքը չընդունվեց 1919 թվականին. այն ժամանակ էլ են եղել «Արթուր-Մ.»-ի համախոհներից:

Լեզվի օրենք չունեցանք 1920-1990 թվականներին՝ չհաշված 1978 թ. Սահմանադրության զուտ ձեւական հոդվածը պետական լեզվի մասին, որը միայն մխիթարում էր հայերենի համար պայքարողներին, բայց իրավական հիմք չէր կարող լինել այդ պայքարի համար, քանի որ թե՛ պետությունն ինքն էր վերացական-ցուցադրական, թե՛ այդ պետության լեզուն էր ենթարկված-ստորադասված կայսրության լեզվին՝ ամենազոր ռուսերենին (դե թող պաշտպանվեր հայերենը, «ինքնապաշտպանության» արգո կողմնակիցներ, չէ՞ որ կամաց-կամաց վերածվում էր կենցաղային լեզվի):

Լեզվի օրենք չունեցանք 1990-ին, 1991-ին՝ չնայած նախագծերը պատրաստ էին: Կունենա՞նք 1992-ի վերջին՝ չգիտեմ: Բայց, եթե ոչ, ապա մեղավորը միայն «Արթուր-Մ.»-ն չի լինելու, այլ բոլորս: Բոլորս անխտիր:

Եւ բոլորս էլ գալիք սերունդների դատի առջեւ ենք կանգնելու անդառնալի կորուստների համար ու արժանանալու ենք գերագույն դատի: ■

Հայաստանը բնակչության ազգային կազմի առումով ոչ միայն նախկին Խորհրդային Միության հանրապետությունների, այլեւ ամբողջ աշխարհի պետությունների մեջ ամենամիատարրերից է: Այնուամենայնիվ, Հայաստանում նույնպես ապրում են ծագումով ոչ հայեր, որոնց համար, սակայն, Հայաստանը նույնպիսի հայրենիք է, ինչպես հայերի համար: Ու թեեւ նրանց տեսակարար կշիռն այնքան էլ մեծ չէ, եւ «ազգային փոքրամասնությունների» խնդիրն էլ այն սրությունը չունի, ինչ հարեւան երկրներում, այնուհանդերձ մեզանում անթույլատրելի կերպով մարդկանց ուշադրությունից դուրս են մնում «մեր» ազգային փոքրամասնությունների կենցաղը, մշակույթը, սովորությունները, հոգսերը, խնդիրները... Պարզվում է, որ հաճախ շատ քիչ բան գիտենք մեր կողքին, մեզ հետ միասին ապրող ժողովուրդների մասին եւ համազգային հոգսերով ծանրաբեռնված՝ երբեմն մոռանում ենք, որ մեզ հետ միասին մեր դժվարություններն ու ուրախությունները, մեր հաջողություններն ու ձախողումներն են կիսում նաեւ ծագումով ոչ հայ հայաստանցիները: Մինչդեռ նրանք բոլոր իրավունքներն ունեն իրենք իրենց բնիկ անվանելու, որովհետեւ սերնդեսերունդ ապրելով այս հողի վրա՝ նվաճել են այս հողը նաեւ իրենցը համարելու իրավունքը:

Պետությունը եւ ժողովուրդը տարբեր հասկացություններ են, եւ եթե պետականություն չունեցող ժողովրդի առաջնահերթ նպատակը համազգային միասնական ուժերով պետականություն ձեռք բերելն է, ապա արդեն իսկ պետականություն ունեցող ժողովրդի համար առաջնայինը պետի պետության շահերը: Իսկ դա նշանակում է, որ նույնիսկ սփյուռք ունեցող հայ ժողովրդի եւ հայկական պետականության համար ծագումով ոչ հայ հայաստանցիների շահերը պետք է գերադասվեն մինչեւ անգամ այլ պետություններում ապրող ծագումով հայերից: Այսօրվա Հայաստանի Հանրապետությունը ստեղծվել է բոլոր հայաստանցիների աշխատանքով՝ անկախ ազգությունից, ուստի պետությունը պարտավոր է, անկախ ազգությունից, հավասարապես պաշտպանել բոլոր հայաստանցիների շահերն ու իրավունքները:

Մինչդեռ, ինչպես վկայում են 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունքները, 1979 թվականի համեմատությամբ 1989 թվականին նվազել է հայաստանաբնակ բոլոր ազգային փոքրամասնությունների թիվը, բացառությամբ եզդիների: Ավելին, եթե նշված 10 տարիների ընթացքում նկատվում էր ոչ հայ բնակչության արտահոսքի կայուն միտում, ապա 1989 թվականից հետո, ինչպես տեղեկացնում է Հայաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների եւ ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի փոխնախագահ Աղասի Արզակյանը, արտահոսքը ուժեղանում է: Եւ սա այն դեպքում, երբ եթե հայաստանաբնակ ռուսները, ուկրաինացիները կամ հույները կարող են Հայաստանը համարել իրենց երկրորդ հայրենիքը, ապա ասորիների կամ եզդիների համար Հայաստանը փաստորեն միակ հայրենիքն է: Բացի այդ, չպետք է մոռանալ, որ հայ ժողովրդի կեսից ավելին բնակվում է Հայաստանից դուրս, եւ Հայաստանի Հանրապետությունն առայժմ ի վիճակի չէ նրանց շահերի առաջին պաշտպանը լինել:

Ըստ պրն. Արզակյանի, ազգային փոքրամասնությունները տվյալ պետության հարստությունն են, եւ Հայաստանում դրանցից զրկվելը պետության համար խիստ ցավալի կլինի եւ մինչեւ անգամ կարող է հայ ժողովրդին կանգնեցնել սեփական ազգային նկարագիրը կորցնելու վտանգի առաջ:

Եւ այսպես՝ ովքե՞ր են ապրում մեր կողքին եւ մեզ հետ ուս ուսի տված՝ կիսում մեր հաղթանակների ուրախություններն ու պարտությունների դառնությունը, ի՞նչ հոգսեր ու խնդիրներ ունեն, եւ վերջապես՝ ինչո՞վ են ապրում...

digitised by A.R.A.R.@

Հայաստան. Փոքրամասնություններ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԽՃԱՆԿԱՐՆ ԱՂՔԱՏԱՆՈՒՄ Է. ՌՈՒՍՆԵՐ



Ռուսներ. Ըստ 1989 թվականի համամիութենական մարդահամարի տվյալների, Հայաստանում նրանց թիվը կազում է 51555 մարդ: 98 տոկոսը մայրենի լեզուն համարում է ռուսերենը: Ծագումով ռուս հայաստանցիներին պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խումբը հիմնականում ռուս զինծառայողներն ու նրանց ընտանիքներն են, որոնք բնակվում են Հայաստանում եւ Հայաստանի բաղաքացիներն են: Այս խումբն ընդգրկում է 25-30 հազար մարդ: Մյուս խմբում այն ռուսներն են, որոնք դեռեւս անցյալ դարում ցարական կառավարության կողմից վերաբնակեցվել են Հայաստանում եւ արդեն հինգ-վեց սերունդ է, ինչ հայաստանցիներ են: Սրանք հիմնականում քրիստոնյա-աղանդավորականներ են՝ մոլոկաններ, դուխոբորներ, սուբբոտնիկներ, որոնց համար, ինչպես իրենք են խոստովանում, Հայաստանում կրոնական դեմքը պահպանելու համար ավելի լավ պայմաններ կան, քան Ռուսաստանում: Ցարական Ռուսաստանը Հայաստանում ռուսական բնակավայրեր էր ստեղծում մարտավարական կարեւոր նշանակություն ունեցող հանգուցակետերում՝ լեռնանցքների մոտ, ճանապարհների խաչմերուկներում եւ այլն, միաժամանակ հաշվի առնելով, որ կլիմայական պայմաններն առանձնապես չտարբերվեն Ռուսաստանի պայմաններից: Այդպես են ստեղծվել, օրինակ, Սեմյոնովկա գյուղը (Սեւանի լեռնանցքի մոտ), Վորոնցովկան (Կալինինո, այժմ՝ Տաշիր), Կոնստանտինովկան (Ծաղկաձոր), Միխայլովկան (Կրասնոսելսկ) եւ այլն:

Ներկայումս հայաստանաբնակ ռուսների թվի մասին ճշգրիտ տեղեկություններ չկան, որովհետեւ 1989 թվականի համամիութենական մարդահամարից հետո հանրապետությունից ռուս ազգաբնակչության արտահոսքն ուժեղացել է, իսկ վիճակագրություն չի իրականացվել: Համենայն դեպս, 1989 թ. հայաստանաբնակ ռուսները հանրապետության տարածքում տեղաբաշխված էին հետեւյալ կերպ. Երեւան՝ 22 հազար, Աբովյան՝ 1000, Գյումրի՝ 3780, Տաշիր՝ 2200, Կրասնոսելսկ՝ 1900, Հրազդան՝ 1700, Վանաձոր՝ 1800, Ստեփանավան՝ 1200: Փոքրաթիվ ռուսներ բնակվում են նաեւ հանրապետության բոլոր մյուս շրջաններում:

Հայաստանից ռուս ազգաբնակչության արտահոսքը սկսվել է դեռեւս 70-ական թվականների կեսերին: Բավական է ասել միայն, որ 1970 թվականին Հայաստանում բնակվում էին շուրջ 66 հազար ռուսներ, 1989-ին՝ 52 հազար: Ներկայումս, ըստ մոտավոր հաշվումների, Հայաստանում մնացել են մոտ 30 հազար ռուսներ: Ո՞րն է պատճառը:

Ըստ Հայաստանի Գերագույն խորհրդի մարդու իրավունքների եւ ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի փոխնախագահ Աղասի Արշակյանի, Հայաստանից հեռացող ռուսների մեծ մասը զինծառայողների ընտանիքներն են, թեեւ հեռանալու միտում կա նաեւ դեռեւս անցյալ դարի կեսերից Հայաստանում բնակվող ռուսների շրջանում: Պատճառները մի քանիսն են՝ հայաստանաբնակ ռուսները դժվարանում են համադասասխան աշխատանք գտնել, սահմանափակ են կրթություն ստանալու հնարավորությունները եւ այլն: Բացի այդ, ըստ դրան. Արշակյանի, վերջին տարիների ազգային զարթոնքը որոշակի ազդեցություն է ունեցել նաեւ հայաստանաբնակ ռուսների վրա, ու թեեւ Հայաստանում հակառուսական տրամադրություններ չկան եւ երբեւէ չեն եղել, այնուամենայնիվ մի քանի զուտ կենցաղային փաստեր արձանագրվել են, իսկ դրանք կարող են հետեւությամբ շահարկվել Ռուսաստանի բազմաթիվ ազգայնական կազմակերպությունների կողմից: Օրինակ, վերջերս ռուս զինծառայողների բնակարանների նկատմամբ կատարվող ոտնձգությունները, որոնց հանդեպ իշխանությունների կողմից պատշաճ ուշադրություն չկա:

Այնուամենայնիվ, Հայաստանից հեռանում են ոչ միայն ռուս զինծառայողներ, այլեւ արդեն Հայաստանում արմատավորված, կարելի է ասել՝ բնիկ հայաստանցի ռուսներ: Ստեփանավանի շրջանի Կիրով (այժմ՝ Ամրակից) գյուղում մնացել են ընդամենը 30 ռուս ընտանիքներ: Չնայած գյուղի տների մեծ մասը տիպիկ ռուսական փայտաշեն տնակներ են, դրանց մի մասում արդեն հայ ընտանիքներ են բնակվում, եւ ռուսների տները կարելի է տարբերել թերեւս միայն լուսամուտների տակ խնամով աճեցված փարթամ ծաղիկներով (որպես կանոն, հայ ընտանիքները գերադասում են հողն ավելի արդյունավետ օգտագործել): Երբ քայլում էինք գյուղի կանոնավոր, իրար զուգահեռ ձգվող, բայց քարուքանդ փողոցներով, մեր ուղեցույցը ռուսական եկեղեցու՝ արեւի տակ հուրհրահին տվող գմբեթներն էին, որի շուրջն էլ հիմնականում կենտրոնացած էին այն հատուկենտ տները, որոնց լուսամուտների տակ դեռ ծաղիկներ են աճում:

Եկեղեցին խիստ վնասվել է երկրաշարժից եւ փաստորեն կիսաքանդ է: Մինչ մենք ոտքի էինք նրա շուրջը, մոտեցավ բավականին երիտասարդ մի հոգեւորական եւ հետվից սկսեց ուսումնասիրել մեզ՝ նախ կասկածանքով, ապա, երեւի տեսնելով մեր լուսանկարչական ապարատները, ավելի հանգիստ: Հայր Նաումն էր՝ եկեղեցու սպասավորը: Նրանից էլ տեղեկացանք, որ գյուղը հիմնադրվել է դեռեւս անցյալ դարում կազակների կողմից եւ ժամանակին եղել է բավականին մարդաշատ (Հայր Նաումը քրքրված պայուսակից հանեց դարասկզբի մի քանի խունացած լուսանկարներ, որոնց վրա նույն այդ եկեղեցին էր՝ շուրջը խմբված մի քանի հարյուր ռուս գեղջուկներ եւ գեղջկուհիներ): Նա պատմեց նաեւ, որ ռուսներն իսկապես զանգվածաբար հեռանում են ոչ միայն Կիրովից, այլեւ Պրիվոլնոյե եւ Մախիմ Գորկի գյուղերից: Հոգեւորականի կարծիքով, հիմնական պատճառն այն է, որ դեռեւս երեսնական թվականներին ինչպես անմոբոչ խորհրդային երկրում, այնպես էլ Հայաստանում մեծ արշավ սկսվեց եկեղեցու դեմ, եւ դա ժողովրդին հեռացրեց կրոնից: Իսկ դա հայաստանաբնակ ռուսների համար մեծ նշանակություն ուներ, որովհետեւ նրանց մի զգալի մասը աղանդավորականներ էին եւ Հայաստանում իրենց կրոնական դեմքը պահպանելու ավելի մեծ հնարավորություններ ունեին, քան Ռուսաստանում, քանի որ Հայաստանում դրան նպաստում էր նաեւ էթնիկական տարբերությունը: Ուղղափառ հոգեւորականն այն կարծիքը հայտնեց նաեւ, որ թեեւ Հայաստանում (Ստեփանավանի շրջանում) հողը շատ բերրի է, ռուսներն էլ՝ աշխատասեր, այնուամենայնիվ ռուսների հեռանալու պատճառներից մեկն էլ սոցիալ-տնտեսական բազմաթիվ դժվարություններն են, որոնք ստիպում են մարդկանց հեռանալ իրենց պատմական օջախներից: Ըստ նրա, հոգեւոր կյանքի վերածնունդը կարող է խոչընդոտել ռուս ազգաբնակչության արտահոսքը: (Օգտվելով առիթից, հայր Նաումը թերթի միջոցով խնդրեց տեղեկացնել, որ Կիրով գյուղի ռուսական ուղղափառ եկեղեցու վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ են դրամական միջոցներ, եւ ցանկացողները կարող են օգնել):

Մատրյոնա տատիկի կարծիքով, Հայաստանից ռուսների հեռանալու պատճառներն ավելի աշխարհիկ են: Ռուս ընտանիքներում մնացել են փաստորեն միայն ծերերը, իսկ նրանց զավակները Ռուսաստանում կրթություն ստանալուց հետո ամուսնացել-մնացել են այնտեղ եւ այժմ Հայաստանի մասին շարունակ տագնապալի լուրեր լսելով՝ կանչում են ծնողներին, կամ բարձրագույն կրթությամբ վերադառնում են գյուղ եւ... աշխատանք չեն գտնում: Ու ստիպված են լինում ծնողների հետ միասին տեղափոխվել Ռուսաստան: *«Հաճախ մեր տղաները Ռուսաստանում ինստիտուտ ավարտելուց հետո վերադառնում են գյուղ. իսկ նրանց առաջարկում են, ասենք, հովիվ աշխատել: Դե նրանք էլ հեռանում են»,* ասում է Մատրյոնա տատիկը:

ՀԱՅԿԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Գյուղում, որտեղ դեռեւս 30 ընտանիք ռուսներ են ապրում, դպրոցը ռուսական դասարաններ չունի: Մնացել են միայն 9-րդ եւ 10-րդ դասարանները: Ասենք, երեխաներ էլ գրեթե չկան: Պարզ է, մեկ-երկու հոգու համար նոպատակահարմար չէ ռուսական առաջին դասարան բացել, եւ նրանք ստիպված են կամ հայկական դասարանում սովորել, կամ ամեն օր հասնել Ստեփանավան: Գյուղում ում հետ էլ զրուցեցինք, ասացին, որ Հայաստանն իրենց երկրորդ հայրենիքն է, բայց արդեն անհնար է այստեղ ապրել: Սոցիալական դժվարությունները խեղդում են: Ճամփեզրին արեւածաղիկ վաճառող կինը բողոքեց՝ արդեն քանի ամիս է բրոշակ չի ստացել: Բոլորի վիճակն էլ նույնն է, բայց ռուսները գոնե նույնն է, բայց ռուսները գոնե գնալու տեղ ունեն եւ օգտվում են դրանից, թեեւ ծանր է բողնել հայրենի օջախը: Եվ հետո՝ մի՞թե հայերը չեն հեռանում:

Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, գիտությունների թեկնածու, Ռուսական մշակութային միության վարչության անդամ Իրինա Դոլժենկոյի կարծիքով, Հայաստանից ռուսների արտահոսքն սկսվել է արդեն 70-ական թվականների կեսերին: Պատճառները բազմազան են՝ աշխատանքի պայմաններ չկան, կրթություն ստանալու եւ այնուհետեւ աշխատանք գտնելու հնարավորությունները սահմանափակ են եւ այլն: Վերջին տարիներին դրանց ավելացել են եւս մի քանիսը՝ Հայաստանում պետական լեզուն հայերենն է, ուստի ազգությամբ ռուս հայաստանցիները հազիվ թե կարողանան բարձր պաշտոններ զբաղեցնել, բացի այդ էլ ռուսներին մտահոգում է Հայաստանի անկախությունը, որովհետեւ դրանով հայաստանաբնակ ռուսները, որոնք միշտ բնակվել են փաստորեն Ռուսաստանում (լինի դա կայսրության ձեւով կամ Խորհրդային Միության), միանգամից կամա թե ակամա հայտնվում են այլ երկրում: Եւ նույնիսկ հնարավոր է, որ վաղը Ռուսաստան մեկնելու համար վիզաներ պահանջեն:

Ըստ Իրինա Դոլժենկոյի, հայաստանաբնակ ռուսներին ամենից շատ մտահոգում է վաղվա օրվա նկատմամբ անորոշությունը: Հայաստանի իշխանությունների կողմից, իհարկե, որեւէ ճնշում չկա, բայց չկա նաեւ ուշադրության որեւէ դրսեւորում: Պարզապես անտարբերություն է: Եւ զարմանալին այն է, որ անտարբերություն կա նաեւ Ռուսաստանի իշխանությունների կողմից: Միայն փոքրիկ մի փաստ, որը սակայն խիստ վիրավորում է հայաստանաբնակ ռուսներին. Ռուսաստանի նախագահ Ելցինը մի քանի անգամ դիմումներ է հղել, բայց ոչ թե հայաստանցիներին, այլ հայ ժողովրդին:

Ըստ Իրինա Դոլժենկոյի, վերջերս հաճախացել են նաեւ զուտ կենցաղային խոսակցությունները, երբ Ադրբեջանից բռնագաղթված հայերը հայաստանցի ռուսներին պարզապես ասում են հեռացեք: *«Հարեւանուհիս, որ նույնպես ռուս է, վերջերս պատմեց, որ հացի հերթում մատնանշել էին իր ծագումով ոչ հայ լինելը եւ չէին ցանկացել հաց տալ: Նա էլ պատասխանել էր, թե ազգությունս հարցնելիք այն ժամանակ, երբ որդուս սահանամերձ շրջաններ էիք ուղարկում»,* պատմում էր նա:

Իսկապես, Հայաստանից բնիկ ռուսները զանգվածաբար հեռանում են, բայց դա բազմաթիվ դժվարությունների հետ է կապված: Ավելի քան մեկուկես դար ապրելով Հայաստանում, ռուսները որոշ չափով փոխվել են, եւ, իրենց իսկ խոսքերով, արդեն այն ռուսները չեն: Հայաստանաբնակ ռուսները նույնիսկ ստեղծել են «Վերադարձ» միություն, որը նպատակ ունի կազմակերպված հունի մեջ դնել ռուսների արտագաղթը, որոնք վճռել են վերադառնալ Ռուսաստան եւ բնակվել այնտեղ:

Կան նաեւ զուտ նյութական հարցեր՝ հայաստանցի ռուսները չեն կարող վաճառել իրենց տները ու տեղափոխվել Ռուսաստան, որովհետեւ այնտեղ այդ գումարով տուն չես գնի: Իսկ Հայաստան վերադառնալ ցանկացող հայերը (հիմնականում Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերից) լավ գիտեն այդ ամենը եւ գերադասում են տներն այնտեղ վաճառել եւ Հայաստանում գնել անհամեմատ ավելի էժան գներով: Ինչպես պատմեց Իրինա Դոլժենկոն, վերջերս Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերից պատվիրակություն էր ժամանել Հայաստան՝ ուսումնասիրելու հայաստանաբնակ ռուսների հետ բնակարանային փոխանակությունների հնարավորությունները: Գուգարքի շրջանի Լեռնոնստովո եւ Ֆիոլետովո գյուղերում հանդիպումներ էին տեղի ունեցել, եւ ի վերջո Լեռնոնստովոյում համաձայնել էին փոխանակել տները, Ֆիոլետովոյում ոչ:

Այս գյուղերում, որտեղ մոլոկաններ էին բնակվում, կրոնական դիմագծերը կորցնելու տագնապը մեծ է: Մոլոկաններն, որոնց համայնքն ապրում է բավականին փակ կյանքով, ներքին որոշում են կայացրել առայժմ չհեռանալ Հայաստանից: Տնտեսական առումով նույնպես որոշակի առանձնահատկություններ ունեն՝ եկամուտի հիմնական աղբյուրը կաղամբն է, որն էլ արտահանում են Վրաստան եւ Հյուսիսային Կովկաս: Ֆիոլետովո գյուղում նույնիսկ մինչեւ այժմ գործում է ֆերմա, միակը, որը նույնիսկ ներկա տնտեսական հարաբերությունների պայմաններում պետությանը կաթ է հանձնում: Լեռնոնստովո գյուղում բուծվում է սեւ աղվես, նորկա, ճագար: Մի խոսքով, մոլոկաններն աչքի են ընկնում աշխատասիրությամբ, ներքին կարգապահությամբ ու բարձր պատասխանատվության զգացումով: Ֆիոլետովոյում, օրինակ, խոտհարքը չեն հերիքում, եւ գյուղացիներն ստիպված են արենդայով հող վերցնել հարեւան հայկական գյուղերից:

Մի բան պարզ է՝ պետք է աշխատել ամեն կերպ կանխել հայաստանցի ռուսների արտագաղթը: Իսկ դրա համար անհրաժեշտ է պարզապես ծանրքանալ նրանց խնդիրներին եւ փորձել հնարավորին չափ օգնել: Օրինակ, Ռուսական մշակութային միությունը ջանում է Երեւանում ստեղծել ռուսական գիմնազիա, եւ թեեւ Ռուսաստանի կողմից նյութական աջակցություն է խոստացվել, այնուամենայնիվ խնդիրն առայժմ չի իրականացվում: Օդում կախված է նաեւ Հայաստանի քաղաքացիության մասին օրենքը, որի ընդունումը գուցե հնարավորություն կտար հայաստանաբնակ ռուսներին ավելի վստահ նայել իրենց առաջին լինելով միաժամանակ եւ Հայաստանի, եւ Ռուսաստանի քաղաքացի: Մի խոսքով, խնդիրները շատ են եւ բոլորն էլ պետական հոգածություն պահանջող: Միայն մի բան պարզ է՝ այս հողի վրա ռուսներն արդեն նույնքան իրավունք ունեն, ինչքան մենք՝ հայերս, որովհետեւ վերջին հաշվով Հայաստանը հայաստանցիների հայրենիքն է՝ անկախ ազգային պատկանելությունից:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Ի. Յուսալ. Ադրբեջանում ընդդիմություն է նկատվում Իրանի հանդեպ

Իբրահիմ Յուսալը՝ ամերիկյան Կոլումբիայի համալսարանի Միջին Ասիայի նշանավոր մասնագետը, ծագումով թուրք, վերջերս երկաբաթյա այցով գտնվում էր Բաքվում: Վերադառնալուց հետո «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի դարակներն հաղորդումների թղթակցի հետ ունեցած հարցազրույցում նա նշել է, որ չնայած Ադրբեջանը քաղաքական եւ տնտեսական տեսակետից շրջանի մյուս երկրների համեմատությամբ բարենպաստ վիճակում է, այնուամենայնիվ, նորանկախ այս հանրապետությունը տնտեսական եւ ռազմական մեծ դժվարությունների առջեւ է կանգնած: Մեկնաբանելով իրադրությունը նա ընդգծել է. *«Նախ Ադրբեջանը շրջանի մյուս երկրների համեմատությամբ բնական պաշարներով ավելի հարուստ է, երկրորդ, Ադրբեջանը Թուրքիայից ստանում է մեծամասնակ օգնություն եւ հովանավորվում է նրա կողմից»:*

Այն, որ Թուրքիան հովանավորում է Ադրբեջանին թե միջազգային ասյաններում եւ թե Ղարաբաղի պատերազմում, պարզ է բոլորին եւ մեկնաբանության կարիք չի զգում: Սակայն պրն. Յուսալը, շեշտելով Թուրքիայի օգնությունը, ըստ երեւույթին ցանկանում է անտեսել Իրանի մեծածավալ օգնությունները Ադրբեջանին: Մասնավորապես կարելի է ասել, որ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունն արդեն վաղուց «ապրում է» ի հաշիվ Իրանի օգնությունների: Միայն հոկտեմբերի 17-ին Նախիջեւանի խնդրանքով գնացքով եւ բեռնատար ավտոշարասյուներով Իրանը Նախիջեւան է առաքել մեծ քանակությամբ կարտոֆիլ, սոխ, բրինձ, ալյուր եւ այլ սննդամթերք, դիզելային վառելիք եւ նավթ:

Չմոռանանք նշել նաեւ, որ ամբողջ Ադրբեջանն անվճար վայելում է Իրանի գազը, մինչդեռ, Նախիջեւանի բնակիչների վկայությամբ Թուրքիայի բնակիչներն իրենց հետ տանելով Նախիջեւանի վառելանյութը, որն Իրանից է գալիս, եւ այլ ապրանքներ, կողոպտում են նրանց: Իրանի անհատույց մեծ օգնությունները անտեսելը Յուսալի կողմից կարելի է բացատրել նաեւ նրա թուրքական ծագումով:

Պրն. Իբրահիմ Յուսալը Ղարաբաղի խնդրին անցնելով շարունակում է. *«Իմ երկու շաբաթ Բաքվում մնալու ժամանակահատվածում բավականին ուսումնասիրություններ եմ կատարել Ադրբեջանի արխիվներում: Ղարաբաղի պատերազմի հետքերը կարելի է տեսնել կյանքի բոլոր ոլորտներում: Ես հանգրվանել էի Բաքվի ամենալավ, այսինքն՝ «Ազարբայջան» հյուրանոցում: Թերեւս Ադրբեջանում միակ հյուրանոցը, ուր տաք ջուր կա: Ես «Ազարբայջան» հյուրանոցում ականատես եմ եղել, թե ինչպես պատերազմից վերադարձած զինվորները համար սանալու նոյատակով զենքի էին դիմում»:* Այնուհետեւ բղրակիցը Յուսալին հարցրեց Բաքվում տիրող իրավիճակի մասին, որի կաղապակցությամբ նա ասաց հետեւյալը. *«Քաղաքի ներսում օրինապահ եւ անվտանգության ուժեր չեն երեւում, կարծես թե կառավարությունը Բաքվում ուժ եւ հեղինակություն չունի, իսկ նման իրադրության պատճառն այն է, որ Աբուլֆազ Էլչիբեյի կառավարությունն ընդամենը մայիս ամսից է գործի գլուխ եկել եւ իր դիրքերը ամրապնդելու համար բավական ժամանակ չի ունեցել, իսկ օրինապահ ուժերը ոչ միայն պետք է վերակառուցվի նավթարդյունաբերության համալիրը, այլեւ Ադրբեջանն առայժմ, բացի նախկին Խ. Միության ճանապարհներից, նավթը երկրից դուրս առաքելու համար այլ ճանապարհներ չունի, որպեսզի կարողանա նավթի վաճառքով ձեռք բերել անհրաժեշտ տարադրամը»:*

Պրն. Յուսալը Ադրբեջանի բանակի եւ ներքին գործերի օրինապահ ուժերի վերաբերյալ ասաց, *«Չնայած Ադրբեջանում խորհրդային բանակի ներկայացուցիչների չես հանդիպի, այնուամենայնիվ Ադրբեջանում, ինչպես նաեւ Միջին Ասիայի հանրապետություններում նախկինի պես խորհրդային միլիցիայի համազգեստն են կրում, եւ այս բոլորն այն տպավորությունն է թողնում, թե կարծես ԽՍՀՄ-ը գոյատեւում է»:*

Պրն. Յուսալը թղթակցի այն հարցին, թե Իրանի քաղաքական կամ մշակութային հեղինակությունը եւ ազդեցությունը որքանո՞վ է տարածված Ադրբեջանում, պատասխանել է. *«Անկեղծ ասած, ես Ադրբեջանում Իրանի ազդեցությունը գրեթե չեմ զգացել, ընդհակառակը, ադրբեջանցիների կողմից միտք է, որ ենթարկվում են նոր ղեկավարությանը»:*

Անդրադառնալով Ադրբեջանի տնտեսության վրա Ղարաբաղի պատերազմի բացասական ազդեցության հարցին, նա ասաց. *«Ղարաբաղի պատերազմի հետեւանքով Ադրբեջանի տնտեսությունը խիստ վնասվել է, որն անցանկալի ազդեցություն է թողել օտարերկրյա այցելուների, մասնավորապես Թուրքիայի քուրդերի նկատմամբ ադրբեջանցիների վերաբերմունքի վրա»:*

Պրն. Յուսալի արտահայտած մտքերը հակասական են եւ խրատամեծ: Նա մի կողմից խոսում է Թուրքիայի զգալի օգնության մասին Ադրբեջանին, որը բնականաբար պետք է բնակչության մոտ Թուրքիայի հանդեպ երախտագիտության զգացմունք առաջացնի, մյուս կողմից շեշտում է ադրբեջանցիների բացասական վերաբերմունքի մասին քուրդերի նկատմամբ: Կոլումբիայի համալսարանի Միջին Ասիայի հարցերի գծով մասնագետ պրն. Յուսալը հարցազրույցի ընթացքում հիշ անց «անկեղծորեն» խոսելով Իրանի ազդեցության մասին, զուգահեռներ անցկացնելով Ադրբեջանի, Իրանի եւ Թուրքիայի ազդեցության ոլորտների միջեւ, նշում է. *«Իրանին հակառակ Թուրքիայի ազդեցությունն Ադրբեջանում ակնհայտ է: Ադրբեջանի դրոշի կողքին փողփողում է Թուրքիայի դրոշը: Ադրբեջանցիները շարունակ Թուրքիայի մասին են խոսում, Թուրքիային ընդունելով իրենց երկրի համար մոդել»:*

Թերեւս կարելի է ենթադրել, որ պրն. Յուսալը տնտեսական ծանր վիճակի անցանկալի ազդեցություն ասելով նկատի ունի հենց այս երեւույթը: Այստեղ կարելի է խոսել նաեւ մի այլ հանգամանքի մասին, թուրքական մոդելն ունի նաեւ ընդդիմախոսներ: Այսպես օրինակ, Ադրբեջանի Ազգային անկախություն կուսակցության ղեկավար Էհթիբար Մամեդովը (ըստ վերջին սոցիոլոգիական հարցումների արդյունքների այս կուսակցության կողմնակիցները հանրապետությունում 20 տոկոս են կազմում) Թեհրանում հրատարակվող «Աբրար» օրաթերթի թղթակցի հետ հարցազրույցի ժամանակ ընդգծելով իրանա-ադրբեջանական սերտ եւ բազմակողմանի հարաբերությունների անհրաժեշտությունը, մնել է. *«Թուրքիան Ադրբեջանի համար չպետք է մոդել լինի»:* Յուսալն առաջ շարունակում է. *«Ադրբեջանում միջին աշխատավարձը 1500-2000 ռուբլի է, այսինքն՝ մոտավորապես 10 դոլլար: Այնինչ ընթրիքը ռեստորանում գրեթե 100 ռուբլի արժի: Ադրբեջանն ունի նավթի զգալի պաշարներ եւ Ամերիկայի ընկերությունների հետ այս բնագավառում պայմանագրեր է կնքել, սակայն քանի որ Ադրբեջանի նավթարդյունահանության համակարգը եւ պլանավորումը նախկին խորհրդային մեթոդներով է, ուստի Բաքվի նավթահորերը հիմնական եւ բազմակողմանի վերակառուցման կարիք ունեն: Այդ իսկ պատճառով Ադրբեջանը չի կարող ցանկացած քանակի նավթ արտադրել: Եւ ոչ միայն պետք է վերակառուցվի նավթարդյունաբերության համալիրը, այլեւ Ադրբեջանն առայժմ, բացի նախկին Խ. Միության ճանապարհներից, նավթը երկրից դուրս առաքելու համար այլ ճանապարհներ չունի, որպեսզի կարողանա նավթի վաճառքով ձեռք բերել անհրաժեշտ տարադրամը»:*

Պրն. Յուսալը Ադրբեջանի բանակի եւ ներքին գործերի օրինապահ ուժերի վերաբերյալ ասաց, *«Չնայած Ադրբեջանում խորհրդային բանակի ներկայացուցիչների չես հանդիպի, այնուամենայնիվ Ադրբեջանում, ինչպես նաեւ Միջին Ասիայի հանրապետություններում նախկինի պես խորհրդային միլիցիայի համազգեստն են կրում, եւ այս բոլորն այն տպավորությունն է թողնում, թե կարծես ԽՍՀՄ-ը գոյատեւում է»:*

Պրն. Յուսալը թղթակցի այն հարցին, թե Իրանի քաղաքական կամ մշակութային հեղինակությունը եւ ազդեցությունը որքանո՞վ է տարածված Ադրբեջանում, պատասխանել է. *«Անկեղծ ասած, ես Ադրբեջանում Իրանի ազդեցությունը գրեթե չեմ զգացել, ընդհակառակը, ադրբեջանցիների կողմից ինչ-որ ընդդիմություն էր նկատվում իրանցիների նկատմամբ: Օրինակ, ես Բաքվում ծանոթացա մի քանի իրանցի ադրբեջանցիների հետ (այստեղ նրանք հայտնի են որպես հարավային ադրբեջանցիներ): Նույնիսկ իրենք էին դժգոհում եւ բողոքում Իրանից: Իրանի ներկայությունը Բաքվում սահմանափակվում է մի քանի գրախանութներով եւ մզկիթներով, որոնք արժանանում են Ադրբեջանի շիաների ուշադրությանը: Ադրբեջանի մամուլն էլ Իրանի մասին ոչինչ չի գրում»:*

Այստեղ չի կարելի անտեսել նաեւ մի կարեւոր հանգամանք եւս. եթե Իրանի գրախանութներն ու մզկիթները Ադրբեջանի շիաների ուշադրությունն են գրավում, արդա չպետք է մոռանալ նաեւ, որ Ադրբեջանի բնակչության գերակշռող մասը շիաներ են: Իսկ Ադրբեջանի մամուլի իրավացիության կաղապակցությամբ կարելի է վկայակոչել Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատ կուսակցության միջազգային հարաբերությունների բաժնի վարիչ տիկ. Նաջաֆզադեի խոսքերը, որ նա ասել է Ամերիկայում ունեցած հարցազրույցներից մեկի ժամանակ. *«Չնայած վիճակն անցյալի համեմատությամբ որոշ չափով բարելավվել է, բայց եւ այնպես լուրերը գրաքննության են ենթարկվում, իսկ քննադատական հոդվածների տպագրությունը նույնիսկ ընդդիմության մամուլում արգելվում է»:* Այդ հարցազրույցի ժամանակ Նաջաֆզադեն Իրանի մասին խոսելով ընդգծել է, թե իր կուսակցությունը կողմնակից է Իրանի հետ սերտ փոխհարաբերություններ հաստատելուն:

Այնուհետեւ Յուսալն ասաց. *«Թուրքիան զգալի մարդասիրական օգնություն է ցույց տալիս Ադրբեջանին, որը բեռնատար մեքենաներով Վրաստանի եւ Իրանի ճանապարհներով առաքվում է Ադրբեջան: Թուրքիան նաեւ ռազմական օգնություն է հատկացնում Ադրբեջանին, բայց գաղտնի ձեւով: Թուրքիայի մի քանի զորացրված գնդապետներ Էլչիբեյի խորհրդականներն են: Պետական որոշ կազմակերպություններում էլ կան թուրք ռազմական խորհրդականներ»:*

Պատասխանելով այն հարցին, թե Թուրքիան արդիական զենքեր տրամադրել է՞ Ադրբեջանին, նա նշեց. *«Ես տեղյակ եմ միայն ռազմական խորհրդականների ներկայության մասին, իսկ արդիական զենքի առաքման վերաբերյալ տեղեկություններ չունեմ: Միեւնույն ժամանակ Թուրքիայում այսօր իրադրությունը գեղարված է: Այդ իսկ պատճառով Անկարան չի ցանկանում վտանգի ենթարկել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տիրող ներկայիս կացությունը: Ես կարծում եմ, որ հենց դա է պատճառը, որ Թուրքիան չի ցանկանում չափից ավելի միջամտել ղարաբաղյան բախումներին»:*

ԷՄՍ ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

Սովը սպառնում է «աֆրիկյան եղջյուրին»

ՄԱԿ-ին պատկանող սննդամթերքի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը իր նոր զեկուցագրում հաղորդում է, որ սովը աֆրիկյան եղջյուրի երկրներում մահվան կդատապարտի 18 միլիոն մարդու, եթե նրանց չհասցվի սննդի անհրաժեշտ օգնություն: Սոմալիի ազգաբնակչության 60 տոկոսը (շուրջ 5 միլիոն մարդ) օգնության կարիք է զգում շարունակվող քաղաքացիական պատերազմի պատճառով, որի ընթացքում քանդվել են արտադրանքի եւ եկամուտների բոլոր աղբյուրները, ավելացած առողջապահական խնամքի բացակայությունը: Իսկ Սուդանում ավելի քան 7 միլիոն մարդ ապրում է սննդային նպաստների շնորհիվ, չնայած որ վերջին բերքն առատ էր: ■

«ԱՄՆ-ի շահերին ներհակ ամեն մի վճիռ կարող է հարցականի տակ դնել Քուվեյթի հետ մեր կնքած պաշտպանական համաձայնագիրը», Պենտագոնի բարձրաստիճան զինվորական պատասխանատուներից մեկի գեներալ Ջոզեֆ Հաուրի մինչեւ օրս գաղտնի պահված այս նախազգուշացումը հավի է առնվել: Ի հեճուկս Լոնդոնի, քուվեյթցիներն ընտրել են ամերիկյան MIA2 հրասայլը եւ ոչ թե բրիտանական «Չելենջեր-2» գրահամեքենան, գրում է ֆրանսիական «Le Point» հանդեսը:

Վաշինգտոնն ամեն ճնշում գործադրեց, եւ նախագահ Բուշն անձամբ միջամտեց 236 հրասայլերի վաճառքի հետ կապված այս գործարքի համար, որի շնորհիվ ԱՄՆ-ը կստանա 2 միլիարդ դոլլար: Վճիռը ակնհայտորեն քաղաքական է, քանզի ամերիկյան եւ բրիտանական զրահապատների տվյալները գրեթե նույնական են: Ի դեպ, դրանց ցուցադրումները կողմերից ոչ մեկին ակնհայտ առավելություն չտվեցին:

Այս փաստը եզակի չէ: Պարսից ծոցի պատերազմից ի վեր ամերիկացիները տենդագին ջանքեր են գործադրում Մերձավոր Արեւելքի զինաբուկանները վերահսկելու համար: Օրինակ, Քուվեյթում Ֆրանսիան փաստորեն դուրս է մղված օդային ու ցամաքային ուժերի ռազմահանդերձանքի շուկայից: Նա հույս ունի միայն նավատորմի հարցում, որը ներկայացնում է Քուվեյթի պաշտպանական բյուջեի 13 տոկոսը: Պայմանագիր է կնքվել 12 ռազմական պահականավի վաճառքի վերաբերյալ: Կասարը, որի զինված ուժերի զգալի մասը հանդերձավորված է ֆրանսիական զենքով, պատրաստվում է Միացյալ Նահանգների հետ բանակցություններ սկսել F-16 ինքնաթիռների մատակարարման շուրջը, մինչդեռ «Միրաժ 2000-5» ռազմօդանավերի ձեռքբերման շուրջը Փարիզի հետ սկսված քննարկումները կանգ են առել:

Սաուդյան Արաբիայում, ուր Ֆրանսիայի ռազմական նախարար Պիեռ Ժոխը կայցելի հոկտեմբերի վերջին, միայն նավատորմի ռազմահանդերձանքն է լուրջ պայմանագրերի հույսեր ներշնչում: ■

Ջինավաճառք. Միացյալ Նահանգների հաղթարշավը

Իրանյան ընդդիմությունը զանգվածային մահապատիժների մասին

Նիկոսիայից ստացված հաղորդումների համաձայն, Իրանի առաջատար ընդդիմադիր կազմակերպության՝ Իրանի իսլամական հեղափոխության բարձրագույն խորհուրդը պնդում է, որ Իրանում վերջին մեկուկես տարվա ընթացքում մահապատժի է ենթարկվել 50 հազար մարդ: Զանգվածային սպանություններ կատարվում են Ռամատի, Բասիա եւ Ամարա քաղաքների մոտ: Իրանում բանտարկված են 250 հազարից ավել մարդ, որոնց թվում են նաեւ եգիպտացիներ, պաղեստինցիներ եւ քուվեյթցիներ: Նրանք բանտարկվել էին դեռ Իրանի կողմից Քուվեյթի գավթման ժամանակ:

«Պամյաս»ը կպաշտպանի իր շահերը

«Պամյաս» ազգային հայրենասիրական ճակատը չի հրաժարվել «Մոսկովսկի կոմսոմոլեց» թերթի վրա ազդելու եւ նրանից «ներողության ու զղջարության հերքման» հասնելու մտադրությունից: Միայն թե «Պամյաս»ը այժմ գործելու է դատարանի միջոցով: Արդեն պատրաստված է Մոսկվայի շրջանային դատարաններից մեկին ուղղված դատական հայցը: «Պամյասի» ակտիվիստներից մեկի խոսքերով, դատի ժամանակ օգտագործվելու են հենց թերթի նյութերը, որոնցում, ինչպես գրել է «Պամյաս»ը, պարունակվում են լրագրողների հանցանքների ապացույցները: «Պամյաս»ը չի բացառում նաեւ թերթի գլխավոր խմբագիր Պավել Գուսեւին հոկտեմբերի 13-ին խմբագրությունում կատարված պատահարը «խեղաթյուրված լուսաբանելու» համար պատասխանատվության կանչելու հնարավորությունը:

«Լոնդիդ»ը կշահագործի Աշխաբադի օդանավակայանը

Ամերիկյան «Լոնդիդ» ֆիրման Թուրքմենստանի հանրապետական ավիաընկերության հետ մինչեւ վերջ կկառուցի, կստանձնի եւ կշահագործի Աշխաբադի միջազգային օդանավակայանը: Բացի այդ, շինարարությանը եւ օդանավակայանի ամբողջ համալիրի շահագործմանը կմասնակցեն արեւմտյան այլ ընկերությունների ներկայացուցիչները (այդ թվում թուրքական): Կառավարական աղբյուրներից հայտնի դարձավ, որ Լոնդոնի միջազգային առեւտրական բանկը 3 տարով 82.03 միլիոն դոլլարի վարկ է առաջարկել Թուրքմենստանի ազգային ավիաընկերությանը: Ֆիրմաների միավորումը պարտավորվում է համալիրին տրամադրել ժամանակակից տեխնիկական սարքավորումներ եւ ուսուցանել սպասարկող անձնակազմին: Ինչպես «Իմա-պրեսս» գործակալության թղթակցին հաղորդեցին Թուրքմենստանի նախագահի մամուլի ծառայությունում, հանրապետության կառավարությունը նախատեսում է շինարարությունը ավարտել մինչեւ 1994 թ. հոկտեմբերը:

Կոզիրեւի այցը Վրաստան հետաձգվում է

«Ազատ Վրաստան» թերթին տված հարցազրույցում Վրաստանի արտգործնախարար Ալեքսանդր Չիկվաիձեն շեշտեց, որ իր ռուսաստանյան գործընկերոջ՝ Անդրեյ Կոզիրեւի այցելությունը Վրաստան հետաձգվել է այն փաստաթղթի անպատրաստության հետեւանքով, որը պետք է դառնա վրաց-աբխազական հակամարտության կարգավորման նոր պայմանավորվածության հիմք:

digitised by A.R.A.R.@

Լատվիայի բանկը շարունակում է դոլլար վաճառել իր բաժանմունքներին

Ինչպես հայտարարեց Լատվիայի բանկի նախագահ Էյնար Ռեպշեն, հոկտեմբերի 24-ին բանկը վաճառել է 4 միլիոն դոլլար կանխիկ եւ 100 հազար փոխանցումով: Ինչպես հայտնի է, շրջանառության մեջ կանխիկ փողի քանակը դասակարգելու համար սեպտեմբերի վերջին Լատվիայի բանկն սկսեց վալյուտայի վաճառքը: Այն մեծացել էր, երբ Լատվիայի բանկը կառավարության խնդրանքով ձեռնարկություններից ստացած վալյուտային վարկը փոխարկել էր լատվիական ռուբլու: Այդ դասճառով Լատվիայի բանկն սկսեց ստացած վալյուտայի վաճառքը, ինչը նպաստեց լատվիական ռուբլու կուրսի աճին: Ներկա դրությամբ Լատվիայի բանկն արդեն վաճառել է նախատեսված կանխիկ դոլլարի քանակությունը, որի հետեւանքով բանկի բաժանմունքները կարող են վալյուտա գնել միայն փոխանցումով: Սակայն ինչպես նշեց Ռեպշեն, շուտով բանկն իր արտասահմանյան հաշվից կստանա ամերիկյան դոլլարի լրացուցիչ քանակություն եւ կվերսկսի դրանց վաճառքը:

Չեչնիան մեղադրում է Ռուսաստանին շրջափակումը կազմակերպելու համար

Չեչնիայի ֆինանսների նախարար Թայմազ Աբուբաքիրովը ռուսաստանյան ղեկավարությանը մեղադրեց հանրապետության շրջափակման կազմակերպման մեջ: Ելույթ ունենալով Գրոզնիում մամուլի ասուլիսում, նա հայտնեց, թե Չեչնիայից արդանի առաքման համար Ռուսաստանի դարտը այսօր կազմում է մոտ 30 միլիարդ ռուբլի: Նկատվում է նաեւ Չեչնիայից «ուղեղի արտահոսք»՝ մեկնում են ռուսալեզու բնակչությունից գիտնականները եւ բարձրակարգ մասնագետները: Խոսելով Ռուսաստանի հետ հարաբերությունների մասին, Չեչնիայի խորհրդարանի նախագահ Հուսային Սիմադովը կարծիք է հայտնել, որ այժմ ընթացող բանակցություններն ի վերջո հաջողությամբ կդասակվեն, քանի որ փոխհարաբերությունների նորմալացմամբ շահագրգռված են երկու կողմերն էլ: «Ամեն ինչ կախված է նրանից, թե վերջապես բարեհոգություն կցուցաբերի՞ Ռուսաստանի ղեկավարությունը», նշել է նա:

Քիշնեւի տրոլեյբուսների վարորդները գործադուլ են սկսել

Մոլդովայի մայրաքաղաքում տրոլեյբուսների վարորդները նախազգուշական գործադուլ են սկսել: 25 երթուղիներով աշխատող ոչ մի մեքենա դուրս չի եկել գիծ: Ինչպես հայտնեցին «ԻՖ»-ին տեղական տրոլեյբուսային վարչությունում, գործադուլն սկսվել է առանց ադմինիստրացիայի հետ համաձայնեցման: Վարորդներին աշխատանքային տեղեր վերադարձնելու փորձերն ապարդյուն են անցել: Գործադուլավորները դահանջում են ամսական 15-20 հազար ռուբլի աշխատավարձ, վճարովի արձակուրդի տեւողության մեծացում մինչեւ օրացուցային 30 օր, արտոնություններ թոշակի անցնելիս, բնակդայմանների բարելավում: Այժմ նրանց աշխատավարձը 5-7 հազար է: «Մոլդովայի կառավարության գրասենյակին կից քաղաքական վերլուծությունների եւ կանխատեսման ծառայության դետ, դատգամավոր Վլադ Դարիեն այդ դահանջները անվանեց «գործնականում անիրականանալի»: Կայանի ղեկավարությունը բանակցություններ է վարում գործադուլավորների հետ, որոնք սդառնացել են իրենց դահանջները չկատարելու դեդքում սկսել անժամկետ համընդհանուր գործադուլ:

Գերեզմանափորի հուշերը

Նա իրոք դատմական դեմք է, այս բարձրակարգ գերեզմանափորը: Նա կյանքում շատ բան է տեսել: Եւ ոչ միայն տեսել, այլեւ արել: Նա չէր ենթադրում, որ իր կյանքի 45-րդ տարում կդառնա Գինեսի ռեկորդների գրքի համար իրական թեկնածու: Բանն այն է, որ այնդիսի մարդիկ, ինչպես այս բնիկ մոսկվացին է, էլ չկան եւ չեն էլ լինի: Նա Ռուսաստանում միակ մարդն է, որ իր սեփական ձեռքով թաղել է ԽՄԿԿ կենտկոմի չորս գլխավոր քարտուղարի, 20-ից ավելի Քաղբյուրոյի անդամների, բազմաթիվ նախարարների եւ այլ հայտնի անձանց: Լսենք այս հազվագյուտ մարդու դատմածը:

Գեորգի Կովալենկո. «Ես թաղել եմ չորս գլխավոր քարտուղարի, 20-ից ավել քաղբյուրոյի անդամի»

23-ամյա աշխատանքի ընթացքում Կովալենկոն հասավ թաղման գործի բարձունքներին, անցավ երկար ճանապարհ՝ գերեզմանափորից մինչեւ գերեզմանատան տնօրեն: Բարձրահասակ, արեւահար դեմքով, հոլիվուդյան ճերմակասամ ժոլիսով, խիտ մազերով, մոդայիկ ջինսով: Գեորգին ավելի շուտ նման է դրոֆեսիոնալ մարզիկի կամ կինոդերասանի, այլ ոչ թե մեկի, որ երկու տասնամյակ զբաղվում էր միայն մի գործով՝ մարդ թաղելով: Սակայն այժմ էլ նա երբեմն շարունակում է թաղել, բայց առանձնահատուկ դեդքերում:

Ամեն ինչ սկսվեց մարտալ Բուդյոննուց: Կովալենկոն հիշում է, որ այդ օրը նա մի հիշ ընկճված էր իրեն զգում՝ շուրջը բարձրաստիճան մարդիկ, օտարերկրյա թղթակիցներ, հեռուստախցիկներ, մեծ բազմություն: Բայց այդ օրը նա իր գործը կատարեց ինչպես հարկն է: Նույնիսկ մրցանակ ստացավ կառավարական առանձնահատուկ առաջադրանքի կատարման համար: Այդ օրվանից հենց որ մահանում էր կուսակցության եւ կառավարության մի երեւելի դեմք՝ նրան «ճանապարհ» էր դնում Գեորգի Կովալենկոն. Խրուշչովը, Բրեժնեւը, Անդրոպովը եւ Չերնենկոն, վարչապետներ Կոսիգինը եւ Տիխոնովը, նախարարներ Գրեչկոն, Գրոմիկոն, Ուստինովը եւ Քաղբյուրոյի այլ անդամներ, դեսպաններ, նկարիչներ, գիտնականներ, զորավարներ եւ նրանց հարազատները: Նա թաղել է նաեւ Ստալինի զինակիցներին: Նրանցից շատերի հետ բարեկամական կապեր էր հաստատել: Մոլոտովը, Կագանովիչը, Կոսիգինը, Գրիշինը, Ուստինովը նրան դիմում էին անուն հայրանունով: Սակայն այդպես չէր լինում բոլորի հետ: Անաստաս Միկոյանը միշտ շրջանցում էր. նա բնավորությամբ խիստ էր եւ միշտ դահպանում էր ենթակարգությունը:

Վերջին երկու տասնամյակում ամենաշքեղ եւ դերճաշտ թաղումը Բրեժնեւինն էր: Ամբողջ կարիերայի ընթացքում Գեորգին ականատես է եղել գերեզմանոցային բազմաթիվ զվարճալի դեդքերի: Ահա դրանցից մի քանիսը:

Մի քանի տարի առաջ, երբ Կովալենկոն մոսկովյան գերեզմանատներից մեկի տնօրենն էր, նրա աշխատասենյակ մտան ՊԱԿ-ից երկու հոգի եւ խնդրեցին շտապ կարգով, բայց առանց աղմուկի տեղ նախապատրաստել մի արտասահմանցու աճյուն թաղելու համար: Այն հարցին, թե ո՞վ է, դատասխանեցին՝ անունը Ռամոն Հոդեսն է՝ «Վաստակավոր ընկեր է, եւ իմիջիայլոց Խ. Միությանն հերոս է»: Մյուս օրը տեղի ունեցավ թաղումը: Այն անցավ շատ շատ, գործնական եւ փաստորեն լռելյայն: Ոչ ճառ, ոչ հրաժեշտի խոսքեր: Մյուս օրը եկավ մի արտասահմանցի եւ հետաքրքրվեց, թե որտեղ է թաղված Ռամոն Հոդեսը: Տարան, ցույց տվին: Մոտեցավ գերեզմանին, միանգամից լրջացավ, բռունցքը բարձրացրեց գլխավերեւը եւ ասաց. «Սալյուտ, կոմդանյերո»: Այնուհետեւ շրջվեց դեպի Կովալենկոն եւ ասաց. «Գիտե՞ս, այստեղ ով է դառկած: Մի մարդ, որը սպանել է Լեւ Տրոցկուն»: Այն ժամանակ, ասում է Կովալենկոն, չէր գիտեին Ռամոն Մերկադերի մասին... Նույն ձեւով թաղվեց հանրահայտ հետախույզ Կիմ Ֆիլբին, սակայն չգիտես ինչու Ֆյոդոր Մարտենցի անվան տակ եւ միայն հուշատախտակի վրա հետագայում գրվեց Կիմ Ֆիլբի անունը:

Կովալենկոյի հիշողությունից չի ջնջվում Միխայիլ Սուսլովի հետ հանդիպումը:

– Մի օր ինձ հեռաձայնեցին մեր տեսից եւ ասացին. «Գեորգի, հիմա քո հետից մեքենա կգա, որ գնաս Նովոդեվիչյե գերեզմանատուն եւ տեղ ընտրես Սուսլովի կնոջ համար»: Եկա գերեզմանատուն, իսկ այնտեղ հավաքվել էին մեր ղեկավարները: Մի ժամից մոտեցավ «Զիլ» ավտոմեքենան, որից դուրս եկավ Սուսլովը: «Այդ դո՞ւք եք Կովալենկոն», հարցրեց: «Ինձ ձեր մասին դատմել են, գնանք, անհրաժեշտ է կնոջս համար տեղ ընտրել»: Մոտ երկու ժամ նրա հետ շրջում էինք գերեզմանատան մեջ, մի քանի տեղ ցույց տվի, ոչ մեկը չհավանեց: Վերջապես կանգ առավ մի ջրավազանի մոտ՝ գերեզմանատան հին ու նոր տարածքի հատման տեղը: «Ահա, այստեղ կթաղենք»: «Ինչպե՞ս թե այստեղ: Ժողովուրդն այստեղից ջուր է վերցնում»: «Ոչինչ, ջրավազանը կհեռացնենք, ժողովուրդը ջուր ուրիշ տեղից կվերցնի»: Ասաց ու հեռացավ: Նրա գալուց հետո հարցնում եմ մեր ղեկավարներին. «Գերեզմանը ե՞րբ փորենք՝ հիմա՞»: Տրեսի կառավարիչը տարօրինակ ձեւով նայեց ինձ եւ ասաց. «Դու ի՞նչ է, ոչինչ չգիտե՞ս: Նրա կինը դեռ կենդանի է»: «Ինչպե՞ս թե»: «Հենց այդպես»: Սուսլովի կնոջը թաղեցին միայն մեկ ամիս անց...

Ստալինի դատասենյակում ժառանգորդին՝ Գեորգի Մալենկովին թաղեցին հանգիստ եւ աննկատ: Շատ քիչ մարդ կար՝ միայն հարազատները եւ մերձավոր բարեկամները: Մինչեւ հիմա գերեզմանքարը չի դրվել: Նույնն էլ տեղի է ունեցել Երոֆիմ Լիսենկոյի գերեզմանի հետ: Նախկին ամենազոր ակադեմիկոսի տղան գերեզմանի վրա ցանել է իր հոր սիրած ցորենը: Իսկ գերեզմանքարը: «Հուշարձան սկզբունքորեն չեմ դնելու: Թող դեսդությունը դնի, հորս ծառայությունները երկրի առջեւ մեծ են: Ինչ-ինչ, բայց հուշարձանի նա արժանի է», գտնում է Լիսենկոն: ■

ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ

Ի՞նչ է հուշում Սդասկու «ներքին ձայնը»

Արդեն ակնհայտ է, որ մրցակիցները, հատկապես Սդասկին, հոգնել են երկարատեւ դայքարից: Պատահական չէ, որ փարիզցի գրասմայստերը բժիշկների թույլտվությամբ խաղադադարներ վերցրեց 24-րդ դարտիայից եւ առաջ, եւ հետո: Այսդիսով, 25-րդ հանդիդումը տեսք է անցկացվի վաղը՝ չորեքշաբթի օրը: Իսկ առայժմ մրցախաղի հաշիվն է 8:4 (տասներկու ոչ-ոքիներով)՝ Ֆիշերի օգտին:

Հետաքրքիր է, որ մամուլի հերթական ասուլիսում Սդասկին հայտարարեց. «Իմ ներքին ձայնը հուշում է, որ մենամարտում կհաղթի Ֆիշերը»: Այս առիթով տեղին է նկատել, որ շախմատիստների բացարձակ մեծամասնության «ներքին ձայնը» նույն բանը հուշում էր շատ ավելի վաղ...

ՍՊԱՍԿԻ-ՖԻՇԵՐ

24-րդ դարտիա

Սիցիլիական դաշտպանություն

1. e4 c5 2. ձe2 ձf6 3. ձbc3 d6 4. g3 g6 5. փg2 ձc6 6. 0-0 փg7 7. d4 cd 8. ձ:d4 փg4 9. ձde2 Ֆc8 10. f3 փh3 11. փ:h3 Ֆ:h3 12. փg5 0-0 13.Ֆd2 h6 14. փe3 Սh7 15. նac1 Ֆd7 16. ձd5 ձ:d5 17. ed ձe5 18. b3 b5 19. փd4 նac8 20. f4 ձg4 21. փ:g7 Ս:g7 22. ձd4 ձf6 23. c4 bc 24. bc e6 25. de fe 26. նfe1 նfe8 27. ձb3 a6 28. Ֆd4 նc6 29. նed1 e5 30. fe ն:e5 31. Ֆ:e5 de 32. ն:d7+ ձ:d7 33. նd1 ձf6 34. c5 Սf7 35. նc1 ձd7 36. Սf2 Սe6 37. Սe3 Սd5 38. նd1+ Սe6 39. նc1 Սd5, ոչ ոքի:



Արշակ Պետրոսյանը Գափրինդաշվիլու մարտավկա

Չինաստանի Շանհայ քաղաքում հավաքվել են ինն ուժեղագույն կին գրոսմայստերներ, որոնք վիճարկում են աշխարհի չեմպիոնուհի Սե Չժունի հետ մենամարտելու իրավունքը: Ի դեպ, շախմատի դատմության մեջ առաջին անգամ տղամարդկանց եւ կանանց թագերի համար մրցախաղեր են նախատեսվում անցկացնել միաժամանակ նույն քաղաքում՝ Լոս Անջելեսում եկող տարվա օգոստոս-հոկտեմբեր ամիսներին:

Շանհայում ներկայացված է նաեւ Հայաստանը: Խոսքը վերաբերում է գրոսմայստր... Արշակ Պետրոսյանին, որին աշխարհի բազմակի չեմպիոնուհի Նոնա Գափրինդաշվիլին խնդրել է կատարել իր մարտավկայի դարտականությունները:

Ավելորդ չէ ընդգծել, որ թեեւ Պետրոսյանը դեռեւս բավականին երիտասարդ է եւ ուժեղ գործող շախմատիստ, բայց ամենաբարձր մակարդակի գրոսմայստերներին մարզելու հարուստ փորձ ունի: Համարյա բոլորովին դատանի, նա մի քանի մրցախաղերում օգնել էր հենց իրեն՝ Տիգրան Պետրոսյանին, արժանանալով հռչակավոր շախմատիստի գովեստներին: Աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդների մրցումներում եւ միջփնջային փուլում Արշակը Ռաֆայել Վահանյանի մարտավկան էր: Երկար տարիներ երեւանցի շախմատիստը մարզում է նաեւ գրոսմայստր Օլեգ Ռոմանիշինին:

Հավակնորդուհիների մրցաշարում Գափրինդաշվիլուց բացի հանդես են գալիս նաեւ Չիբուրդանիձեն ու Իոսելիանին, հարավսլավուհի Մարիչը, ԱՄՆ-ի ներկայացուցիչ Լեւիտինան, հունգարուհի Պոլգար Իլյրեցին ավագը՝ ժուժան եւ երեք չինուհիներ՝ Փենգը, Քինը եւ Վոնգը: Գ. Հ.

ՌԱՅԻՍԱ ՎՈՍԿԵՐԻՉՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Գեղարվեստական մարմնամարզության Հայաստանի առաջնության մրցումներում գեղազանց հանդես եկավ սդորտի վարդեստ Լուսինե Մկրտչյանը, որը դարձավ հանրապետության չեմպիոն:

Ֆուտբոլի աշխարհի առաջնություն

եւրոդական առաջին խումբ

Էստոնիա-Մալթա՝ 0:0:

«Հաստիս»ը սդասում է մրցակցին

Վաղը բասկետբոլի եւրոդական ակումբային մրցաշարերի 1/16-րդ եզրափակիչի առաջին հանդիդումների օրն է: Ռոնկետիի գավաթի խաղարկությունում հանդես եկող Աբովյանի «Հաստիս»ը առաջին խաղը դետք է անցկացնի սեփական հարկի տակ եւ սդասում է մրցակցին՝ Չեխո-Սլովակիայի Բանկա-Բիստրիցա քաղաքի «Սդարտա» թիմին: ■

Շախմատ

Հովիկ Դանիելյանը երկրդ տեղում

Արգենտինայում շարունակվում են մինչեւ 20 տարեկան աղջիկների եւ տղաների շախմատի աշխարհի առաջնությունները: Հաջող մեկնարկից հետո մեր երկու ներկայացուցիչներից հատկապես էլինա Դանիելյանը զգալիորեն դանդաղեցրեց ընթացքը եւ վերջին 4 տուրերում վաստակելով ընդամենը մեկ միավոր, այժմ 9 հնարավորից 5 միավորով աղյուսակի միջնամասում է: Իսկ Հովիկ Դանիելյանը, չնայած նույն հաստվածում ձեռք է բերել 2,5 միավոր, սակայն 9 հնարավորից 6,5 միավորով 2-րդ տեղում է: Առաջնությունների ավարտին մնացել է 4-ական տուր: Նկատենք, որ հակառակ դայմանավորվածության ու լրատվական միջոցների նախորդ հաղորդումների, մրցաշարն ընթանում է ոչ թե Ուսուալայում, այլ Բուենոս Այրեսում: ■

ՀՀ առաջնություն

«Կոտայք»-ՀԱՍ-ՖԻՄՍ՝ 1:2, «Կանաց»-«Բանանց»՝ 1:6, «Արարատ»-«Շիրակ»՝ 0:0:

Մարտական ոչ ոքի

Լուրեր էին դտսվում, թե «Արարատ»ը զրկվելով մրցանակային տեղից, հավանաբար առանց դայքարի անչափ կարեւոր երկու միավոր կդարգեւի չեմպիոնի կոչման համար դայքարող «Շիրակ»-ին: Սակայն, հենց սկզբից կոշտ ու անզիջում դայքարը վկայեց, որ փոխզիջման մասին խոսք լինել չի կարող: Դա «Արարատ»-ի համար փաստորեն հեղինակության խաղ էր: «Շիրակ»-ն էլ ոչնչով չզիջեց: Արձանագրվեց մարտական ոչ-ոքի: Չեմպիոնի հարցը դեռ օրակարգից դուրս չի մնացել:

Մրցաշարային աղյուսակը հոկտեմբերի 27-ի դրությամբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բանանց	20	16	2	2	70-22	34
2. ՀՍԸՄ	20	15	3	2	70-28	33
3. Շիրակ	20	15	3	2	50-14	33
4. Արարատ	20	13	4	3	66-15	30
5. Վան	21	11	1	9	47-46	23
6. Սյունիք	21	7	3	11	39-47	17
7. Նաիրի	20	6	5	9	24-44	17
8. Կոտայք	20	6	3	11	27-40	15
9. ՀԱՍ-ՖԻՄՍ	20	5	4	11	27-40	14
10. Ջվարթնոց	20	3	5	12	30-56	11
11. Կիլիկիա	20	3	2	15	21-86	8
12. Կանաց	20	2	3	15	26-59	7

Բաժինը վարում է Սուրեն ԲԱԴԻԼՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Ի. Հարությունյանն ընդունեց ՄԿՀ-ի ղեկավարությանը

Ինչպես հաղորդում է Հայաստանի կառավարության լրատվական ծառայությունը, հոկտեմբերի 26-ին վարչապետ Խոսրով Հարությունյանն ընդունեց Միջազգային վերակառուցողական հիմնադրամի ղեկավարությանը Դոնալ Դոնովանի գլխավորությամբ:

Պրն. Դոնովանը ներկայացրել է Խորհրդային Միության տնտեսական բարեփոխումների վերաբերյալ ղեկավարության նկատառումներն ու նախնական եզրակացությունները: Տնտեսական իրավիճակը ղեկավարության գնահատմամբ շարունակում է մնալ լարված, իսկ աճող սոցիալական լարվածությունն առաջ է բերել ճնշում կառավարության վրա, բուլացնելով նրա ջանքերը տնտեսական բարեփոխումների իրականացման գործում: Զգալի վաստակաբերում է տալիս ոչ տնտեսական գործոնների ազդեցությամբ շրջանում շարունակվող հակամարտությունն, Վրաստանով անցնող հաղորդակցության կարևորագույն ուղիների շրջափակումը: Ռուբլու գոտու ֆինանսական անկայունությունը նույնպես նկատելիորեն դժվարացնում է մակրոտնտեսական բարեփոխումների իրականացումը:

Պրն. Դոնովանը կասկած է հայտնել, որ մենակով ռուբլու գոտում Հայաստանը կկարողանա հասնել ֆինանսական միջոցները, որովհետև եթե ֆինանսական առումով ռուբլու գոտին մնա անկայուն վիճակում, աղա դա անհնար կդարձնի տնտեսական բարեփոխումների ծրագրի իրականացումը, ծրագիր, որը մասնավորապես նախատեսված է նաև արժեզրկումը կրճատելու համար:

Խոսելով ինքնուրույն տնտեսական և ֆինանսական բարեփոխումներ վարելու նպատակով սեփական ազգային դրամանիշ մտցնելու անհրաժեշտության մասին, ղեկավարությունը նշել է, թե այդ կերպ հնարավոր կլինի նաև կառավարելի դարձնել բյուջեի աճող դեֆիցիտը:

Պրն. Դոնովանը տեղեկացրել է նաև, որ վերադարձից հետո ղեկավարությունը մանրամասն հաշվետվություն կներկայացնի ֆինանսական բարեփոխումների վերաբերյալ իր առաջարկների մասին: ■

Երևանում «Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադրությունը» թեմայով սոցիոլոգների համաժողով

Ինչպես «Նոյյան տապան» գործակալությանը հայտնեց Հայաստանի սոցիոլոգիական ասոցիացիայի նախագահ Գեորգ Պողոսյանը, 1990 թ. հոկտեմբերին Հայաստանում գրանցվել է Հայաստանի անկախ սոցիոլոգիական ասոցիացիան: 1992 թ. մայիսին նա առաջինը նախկին ԽՍՀՄ նմանատիպ ասոցիացիաներից ընդգրկվեց համաշխարհային սոցիոլոգիական ասոցիացիաների կազմում Ա կատեգորիայով: Ասոցիացիայի կազմում ընդգրկված են 80 անհատ և որեւէ կոլեկտիվ ներկայացնող 10 անդամներ: Ասոցիացիան միավորում է Հայաստանի եւ ԱՄՆ-ի սոցիոլոգներին: Նրա կազմում ընդգրկված են 5 ղեկավար անդամներ՝ ԱՄՆ-ի հայազգի հանրահայտ սոցիոլոգներ:

Ասոցիացիան իր ներկայացուցչություններն է բացել Նյու Յորքում եւ Բոստոնում: Նրա մասնաճյուղերը գործում են Ղարաբաղում, Գյումրիում եւ Վանաձորում:

Գեորգ Պողոսյանը հայտնեց նաեւ, որ իր ղեկավարած կազմակերպության հիմնական նպատակներից է նաեւ սոցիոլոգիական գիտական հետազոտությունների համախմբումը, գիտական համաժողովների կազմակերպումը, համաշխարհային սոցիոլոգիական կոնգրեսին մասնակցելու նախնական աշխատանքների կատարումը, որը հրավիրվում է չորս տարին մեկ անգամ: Առաջին անգամ ասոցիացիայի ջանքերով ստեղծվել է հայ գիտնականների տվյալների բանկ, նրանում ընդգրկվել են չորս հազար անուններ:

Պողոսյանը հայտնեց, որ նախապատրաստական աշխատանքներ են տարվում Սոցիոլոգների համաշխարհային կոնգրեսին 1994 թ. դեպքերի ներկայացնելու ուղղությամբ: Քանի որ այդ կոնգրեսին Հայաստանը պետք է ներկայանա որպես անկախ անդամ, բեկնածուների խիստ ընտրություն է կատարվում: ■

Աբխազիա. Ռուսական զորամասին հրամայված է կրակել

Աբխազիայի պաշտպանության նախարարության հաղորդման համաձայն, կիրակի օրը Էշերի-Սուխում ուղղությամբ չէր դադարում ծանր հրետանու օգտագործմամբ փոխհրաձգությունը: Հոկտեմբերի լույս 26-ի գիշերը համենմատաբար հանգիստ է անցել:

Աբխազիայի Օչամչիրի շրջանում ընթանում են առանձին գրոհներ՝ կոմունիկացիաների վրա հսկողության համար:

Աբխազիայի պաշտպանության նախարարության հաղորդման համաձայն, Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության օպերատիվ խմբի կողմից ռուսաստանյան զինծառայողների դիրքերի չդադարող գնդակոծման կաղակցությամբ որոշում է ընդունվել կրակին կրակով պատասխանել: Ռուսաստանյան զորքերի կողմից հսկվող օբյեկտների տարածքում արկ ընկնելու դեպքում հրաման է տրված առանց նախազգուշացման կրակ բացել: ■

Եկատերինբուրգում սպանվել է ազդեցիկ մաֆիոզ

Հոկտեմբերի 26-ին Եկատերինբուրգում սպանվել են «սվերդլովսկի տնտեսության» հայտնի դեմքերից մեկը՝ Օլեգ Վագինը եւ նրա երկու թիկնապահները: Վկաների պնդմամբ, նրանց գնդակահարել են դեմ առ դեմ, ավտոմատներից, անծանոթ անձինք, որոնք իջել են «Ժիգուլի» ավտոմեքենայից: Մարզի դատախազությունը, որն զբաղվում է այդ գործով, հրաժարվեց որեւէ մեկնաբանություն տալ: Օ. Վագինը հսկում էր քաղաքի խաղային բիզնեսը եւ առեւտուրը: ■

Շեւարդնաձեի ռադիո դիմումը ժողովրդին

Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն հայտարարել է, թե նոր խորհրդարանի առաջնահերթ խնդիրն է իշխանության մասին օրենքի ընդունումը: *«Վրաստանին անհրաժեշտ է ուժեղ գործադիր իշխանություն, ասաց նա, ելույթ ունենալով երկուշաբթի օրը ռադիոյով, այդ իշխանության կազմավորումն առաջնային է»:*

Անդրադառնալով Վրաստանի տարածքում ռուսական զորքերի ներկայությանը, Է. Շեւարդնաձեն հայտարարել է, թե դա առայժմ արդարացված է, եւ Վրաստանի շահերից ելնելով են դրանք գտնվում նրա տարածքում: Վրացական ղեկավարը կարծիք է հայտնել, որ շատ բանում Վրաստանի առաջան կախված է Ռուսաստանում իրավիճակի կայունությունից: Նրա խոսքերով, Ռուսաստանը մոտեցումը քաղաքային վիճակին կարող է Վրաստանում բերել ամենածանր հետեւանքների:

Մոտալուտ ձմռան մասին խոսելիս է. Շեւարդնաձեն նշել է, թե այն դժվարին կլինի: Այժմ կատարվում է բոլոր ռեզերվների մոբիլիզացիա, հանրապետություն կներմուծվեն մթերքներ, որոնք գնվել են Եւրոպայում: Դա կբավականացնի 4-5 ամիս: Ենթադրվում է, որ Վրաստանը վարկ կստանա ԱՄՆ-ից եւ Թուրքիայից: ■

Գորբաչով-Բորովոյ միացյալ մամուլի ասուլիս

Միխայիլ Գորբաչովը եւ Տնտեսական ազատության կուսակցության ղեկավար, հայտնի ձեռնարկատեր Կոնստանտին Բորովոյը հոկտեմբերի 27-ին կանցկացնեն միացյալ մամուլի ասուլիս, որը նվիրված կլինի գարնանն անցկացվելիք «Ոչ ավանդական միջոցներով առաջարկումների լուծման ոչ ավանդական մեթոդներ» համաժողովին: Համաժողովը նախատեսվում է անցկացնել մարտի 18-ից 19-ը Մոսկվայում: Այն կազմակերպում են Գորբաչովի հիմնադրամը եւ ՏԱԿ-ը: Ինչպես «ԻՖ»-ին հայտնեցին ՏԱԿ-ի շաբաթական տեղեկատվությունում, միացյալ մամուլի ասուլիսի անցկացման պայմանավորվածությունը ձեռք է բերվել ուրբաթ օրը: ■

Լուրերի Ռոսֆ

«Սամսունգ»-ը Կրասնոյարսկում

Փակված «Կրասնոյարսկ-26»-ում, աղառազմականացվող լեռնահիմնական կոմբինատի արտադրամասերից մեկում (միջուկային վառելիքի արտադրության) հոսքագծից իջեցվեց «Սամսունգ» ֆիրմայի արտոնագրով արտադրվող հեռուստացույցների առաջին խմբաքանակը: 1992 թ. այստեղ կհավաքվեն 12 հազար, իսկ 1993-ին 80 հազար հարավկորեական հեռուստացույցներ: ■

Ալկոհոլային նոր արտոնագրեր

Նոյեմբերի 15-ից Վրաստանում մտցվում են ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի արտադրության նոր արտոնագրեր, որոնք տարածվում են հանրապետության տարածքում գտնվող բոլոր կազմակերպությունների, ձեռնարկությունների վրա, անկախ նրանց վարչական ենթակայության, սեփականության ձեւից: Բացառություն են կազմում միայն սեփական օգտագործման համար պատրաստվող ալկոհոլային խմիչքները: Ինչպես նշվում է Վրաստանի կառավարության որոշման մեջ, այս միջոցները ձեռք են առնված ալկոհոլային խմիչքների եւ ծխախոտի արտադրությունը հսկելու, դրանց որակը լավացնելու եւ միջազգային շուկայում մրցունակության ապահովման համար: ■

Ձեւական բռնագրավում

Աբխազիայի ԳԽ լրատվական ծառայությունը, հենվելով «Սուխումի օկուպացիոն զորքերի ղեկավարությանը մոտ գտնվող իրազեկ» աղբյուրների վրա, հայտնում է, թե Վրաստանի եւ Սեւծովյան նավատորմի ղեկավարությունները պայմանավորվել են կազմակերպել «Փոթիի շրջանում տեղակայված ռազմական նավերի ձեւական բռնագրավում»: Հայտարարության մեջ նշված է, որ «այդ նավերն անհրաժեշտ են Վրաստանի ղեկավարությանը Աբխազիայի ինքնադատաբանության ուժերի դեմ տարվող ռազմական գործողություններում»: Լրատվական ծառայությունը ընդգծեցել է Վրաստանի հավակնությունը Սեւծովյան նավատորմի նկատմամբ: ■

Կորեացի ձկնագողեր

Կիրակի օրը ռուսական սահմանապահ նավը Կուրիլյան կղզիների շրջանում ձերբակալեց հյուսիսկորեական չորս ձկնորսական նավեր: Հեռավորարեւելյան սահմանապահ օկրուգի շտաբից հայտնում են, թե կորեացիները ձուկ են բռնել Ռուսաստանի տարածային ջրերում, Օնեկոտան կղզուց ընդամենը 1 կմ հեռավորության վրա: Ձերբակալված նավերը հասցվել են Սեւերո-Կուրիլսկ, որտեղ անց է կացվում հետաքննություն: ■

Լուրերը՝ interfax-ի «Սմարտի», «Նոյյան տապանի» եւ մեր թղթակիցների

Ազգ

Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տնօրէն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ

52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրէն

Apple® Macintosh® համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

ԳԻՆԻ
տեղեկատուն

կօգնի
Ձեր ձեռնարկությանը

✓ *տարածել* իր մասին անհրաժեշտ տեղեկություններ Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս

✓ *դառնալ* ճանաչելի եւ մատչելի ինչպես գործարար աշխարհի, այնպես էլ բոլոր հետաքրքրվողների համար

✓ *աշխատել* առանց միջնորդների

✓ *արագ* գտնել անհրաժեշտ գործընկերներ

Տեղեկատվությունը տարածվում է հեռախոսով՝ անվճար, պարբերաբար հրատարակվող տեղեկագրքերով եւ կոմպյուտերային եղանակով

Տպավորիչ եւ ազդեցիկ գովազդներն անգամ անցողիկ են, իսկ մեզ մոտ գրանցված տեղեկությունները՝ մնայուն

հեռախոս
589 167
հավաստի, լիարժեք, արագ տեղեկատվություն

Հայաստանի Հանրապետություն
Երեւան Վռամշապուհ արքայի 2/8

ԴԻՍԿԳՈՆՈՍՏԻԿԱ

Դիմեք մեր բժշկական կենտրոններին, եւ Ձեր առողջությունը հուսալի ձեռքերում կլինի:

Երեւան, Աջափնյակ, Մարգարյան փ. 6,
հեռ. 35-01-58, 35-13-01
Քանաքեռ, Ֆանարջյան փ. 55,
հեռ. 28-75-24,
Կենտրոն, Թումանյան փ. 23, հեռ. 53-85-81
Գյումրի, Շչեդրինի 54ա, հեռ 3-60-72
Գորիս, Մաշտոցի փ. 3, հեռ. 2-26-87

ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

☛ Առաջարկում է հիվանդությունների ախտորոշման բարձրագույն մակարդակ:

☛ Առաջարկում է ձեր առողջությունը ողջ կյանքի ընթացքում:

☛ Միայն մեզ Դուք կարող եք դիմել բոլոր հիվանդությունների դեպքում եւ բոլոր բժշկական հարցերով, քանի որ «ԴԻՍԿԳՈՆՈՍՏԻԿԱ»-ն ոչ միայն միջազգային պահանջներին համապատասխանող ամենաժամանակակից սարքերն ու մասնագետներն ունի, այլեւ անհրաժեշտության դեպքում Ձեր բուժօգնությունը կազմակերպում է հանրապետությունից դուրս կամ համապատասխան մասնագետներ է հրավիրում:

☛ Միայն մեզ մոտ Դուք կարող եք ստանալ Ձեր ախտորոշումը կամ արագորեն առողջությունը կայուն եւ ցածր գներով, անկախ ցույց տրվող բուժօգնության ծավալից եւ տեսակներից:

☛ Մենք ընդունում ենք բժիշկների տնային կանչեր (հեռ. 35-70-38) Դուք կարող եք անցնել հետազոտությունները ավելի արագ եւ հանգիստ մթնոլորտում, եթե դիմեք մեզ ժամը 14.00-ից հետո կամ շաբաթ օրերը ժամը 9.00-ից մինչեւ 15.00:

☛ Ձեր հարմարության համար մենք աշխատում ենք ամեն օր (բացի կիրակի օրից), ժամը 8.30-ից մինչեւ 19.00, շաբաթ օրը՝ մինչեւ 15.00:

PUBLISET

Azg Daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010 Editor H. AVEDIKIAN

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2

Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Ստորագրուած է տպագրութեան 26.10.1992

Գին 69149
Պատուէր 1571

digitised by A.R.A.R.@